

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱԿԱՍԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ
ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ
(ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ)**

ՂԱՍԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան*

ՍՈՒՐԱԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար,
ՀՀ-ում ֆրանսիական համալսարանի դասախոս,
ՀՀ փաստաբանական ակադեմիայի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՇԱՔԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ,
ՀՀ-ում ֆրանսիական համալսարանի դասախոս, Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

DOI: 10.63925/18294847-2025.19օր-06

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է միջազգային պայմանագրին հակասելու հիմքով ենթաօրենսդրական ակտերն անվավեր ճանաչելու մեթոդաբանական և վարչա-դատավարական հիմնախնդիրներին, ինչպես նաև իրավական ինքնիշխանության հարցերին: Ներկայացված է ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման եռաչափ համակարգը՝ սահմանադրականություն, օրինականություն և կոնվենցիոնալություն, և այս համատեքստում վեր է հանվել կոնվենցիոնալության չափացույցի անկենսունակությունը: Հիմնախնդրի խորքային վերլուծության համար անդրադարձ է կատարվել նաև միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության տեսական մոտեցումներին՝ դուալիզմ և մոնիզմ՝ հատկապես կարևորելով ազգային իրավունքի համակարգում կիրառման հարցի որոշակիացման տեսանկյունից «pacta sunt servanda» սկզբունքը:

Հոդվածում գիտատեսական հարթության վրա քննարկվել են հետևյալ հիմնա-հարցերը՝ միջազգային պայմանագիրն արդյո՞ք նորմատիվ իրավական ակտ է և ին՞չ տեղ է զբաղեցնում իրավական ակտերի (օրենսդրության) աստիճանակարգության համակարգում, ռեալիստական և իրավահամեմատական տեսանկյուններից արդյո՞ք հիմնավորվում է ենթաօրենսդրական ակտերը կոնվենցիային հակասելու հիմքով ան-վավեր ճանաչելու գաղափարը:

Հոդվածում ներկայացվել է նաև ՀՀ վարչական դատարանի՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասության օրինաչափության հիմնահարցը և դրա իրավահամեմատական տեսանկյունը, և եզրահանգում է արվել առ այն, որ վարչական դատարանը ոչ թե պետք է շրջանցի սահմանադրական արդարադատությունը և ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչի, այլ «Pacta sunt servanda» սկզբունքն ապահովի՝ անմիջապես կիրառելով միջազգային պայմանագրի դրույթը:

Հիմնաբառեր: միջազգային պայմանագիր, ենթաօրենսդրական ակտեր, կոնվենցիոնալության չափացույց, «pacta sunt servanda» սկզբունք, դուալիզմ, մոնիզմ, կոնվենցիային հակասություն, վարչական դատարանի իրավասություն, անվավեր ճանաչել:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Օրենսդրական կարգավորումները և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ վարչ. դատ. օր-ի) 191-րդ հոդվածի համաձայն.

«Վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի**՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող **նորմատիվ իրավական ակտերին** (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը» (ընդգծումը՝ հեղ.):

Այս նորմում ՀՀ վարչական դատարանին իրավասություն է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը (այսուհետ՝ ենթաօրենսդրական ակտը) ճանաչել անվավեր, եթե այն հակասում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին: Օրենսդիրը չի թվարկել, թե բարձր իրավաբանական ուժ ունեցող ո՞ր նորմատիվ իրավական ակտերն են (բացի Սահմանադրությունից) համարվում ենթաօրենսդրական ակտերի իրավաչափությունն ստուգելու չափացույցը (մասշտաբը): ՀՀ իրավական համակարգում վարչական դատական նորմավերահսկողության (ուղղակի դատական վերահսկողության) սահմաններում «ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ» ասելով հասկացվել է օրենքը (սահմանադրական օրենքները և «սովորական» օրենքները), իսկ միջազգային պայմանագիրը (այսուհետև՝ նաև կոնվենցիա), որը ենթաօրենսդրական ակտի համեմատությամբ թեև ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, չի համարվել նորմատիվ իրավական ակտ և ենթաօրենսդրական ակտի իրավաչափությունն ստուգելու չափանիշ: Այսինքն՝ ՀՀ վարչական դատարանը ենթաօրենսդրական ակտերի իրավաչափությունն ստուգում է միայն օրենքին համապատասխանելու տեսանկյունից: Այս պնդումը կասկածի տակ դրվեց թիվ ՎԴ/9227/05/23 վարչական գործով արտահայտված ընդհանուր իրավական դիրքորոշմամբ: Այս հարցի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 25.09.2024 թ. որոշմամբ նշել է.

«Անդրադառնալով Կոնվենցիայի՝ նորմատիվ իրավական ակտ հանդիսանալու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը. վավերացման միջոցով միջազգային պայմանագիրն ընդգրկվում է **ներպետական օրենսդրություն** և **դառնում դրա մի մասնիկը**՝ օժտվելով պարտադիր կիրառելիության հատկանիշով: Ընդ որում՝ միջազգային պայմանագիրն այդպիսով ոչ միայն դառնում է իրավական համակարգի մի մասը, այլև **ընդգրկվում է ներպետական օրենսդրությունում և հավասարեցվում ազգային օրենքներին**, ըստ այդմ՝ **ներպետական օրենսդրության աստիճանակարգությունում հաջորդելով ՀՀ Սահմանադրությանը՝ զբաղեցնում է իր ուրույն տեղը**» (ընդգծումը՝ հեղ.):

ՀՀ վճռաբեկ դատարանը հստակ նշել է, որ ենթաօրենսդրական ակտի համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ ասելով պետք է հասկանալ ոչ միայն օրենքը, այլ նաև կոնվենցիան, ուստի եթե անձը, դիմելով ՀՀ վարչական դատարան, վիճարկում է իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի համապատասխանությունը կոնվենցիային, ապա ՀՀ վարչական դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել դիմողի ներկայացրած փաստարկները: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատարանը պարտավոր է նորմավերահսկողության (ՀՀ վարչ. դատ. օր-ի 26-րդ գլխի) շրջանակում քննարկել ենթաօրենսդրական ակտի՝ կոնվենցիային համապատասխանելու հարցը: Եթե պարզվի, որ ենթաօրենսդրական ակտը հակասում է կոնվենցիային (գործնականում ենթաօրենսդրական ակտի ուղիղ հակասություն կոնվենցիային, որպես կանոն, քիչ հավանական է, որի մասին կլիտսվի հաջորդիվ), ապա ոչ թե պետք է հրաժարվի կիրառել ենթաօրենսդրական ակտը (անուղղակի դատական վերահսկողություն), այլ ենթաօրենսդրական ակտը պետք է ճանաչի անվավեր (ուղղակի դատական վերահսկողություն կամ նորմավերահսկողություն), ինչը նշանակում է, որ ներպետական իրավական ակտն իրավաբանորեն դադարում է գործել վերպետական (միջազգային) իրավունքին հակասելու հիմքով:

Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը ներմուծել է ենթաօրենսդրական ակտերի իրավաչափությունն ստուգելու ևս մեկ չափացույց՝ ենթաօրենսդրական ակտի համապատասխանությունը միջազգային պայմանագրին, որը կանվանենք ենթաօրենսդրական ակտերի կոնվենցիոնալություն:

Մինչև ՀՀ վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը բովանդակային առումով քննարկելն անհրաժեշտ է անդրադառնալ ենթաօրենսդրական ակտի կոնվենցիոնալության չափացույցի ներմուծման խնդրին:

1.2. Ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման եռաչափ համակարգը. սահմանադրականություն, օրինականություն և կոնվենցիոնալություն

ՀՀ վճռաբեկ դատարանի նշված որոշմամբ ՀՀ-ում ներդրվել է ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման եռաչափ (եռաստիճան) համակարգ՝ սահմանադրականություն, օրինականություն և կոնվենցիոնալություն: Մինչ այդ ՀՀ

իրավական համակարգում նախատեսված է եղել ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման դուալիստական համակարգ՝ ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականությունը և օրինականությունը:

Ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման դուալիստական համակարգը գործնականում առաջացրել է ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության և օրինականության տարբերակման խնդիրը, որի արդյունքում քաղաքացիները երբեմն զրկվել են արդարադատության իրավունքից:

ՀՀ իրավունքի զարգացման պատմությունը վկայում է այն մասին, որ ՀՀ իրավական համակարգը տևական ժամանակ չի կոդմնորոշվել ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության և օրինականության սահմանազատման հարցում: Ընդ որում՝ ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականությունը և օրինականությունը ոչ միայն ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման չափացույցեր են, այլ նաև ՀՀ սահմանադրական դատարանի և այլ դատարանների իրավասության (ենթակայության կամ ընդդատության) տարանջատման միջոցներ են: Օրինակ՝ ՀՀ դատարանները, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, 1999-2006թթ-ին, ի հակառակ ՀՀ քաղ. դատ. օր-ի 26-րդ գլխում նախատեսված կարգավորումների, հրաժարվում էին քննել քաղաքացիների այն դիմումները, որոնցով վիճարկվում էր ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ ակտերի օրինականությունը: Դատարանները նշում էին հետևյալ հիմնավորումը.

«ՀՀ քաղ. դատ. օր-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է»:

Այս պրակտիկայի պատճառներից մեկը (տեսանելի պատճառ) այն էր, թե իբրև ՀՀ ընդհանուր իրավասության դատարանները չեն տարբերակում ենթաօրենսդրական ակտերի օրինականությունը և սահմանադրականությունը. քաղաքացին վիճարկում էր ՀՀ Նախագահի հրամանագրի օրինականությունը, սակայն ՀՀ դատարանները միաձայն նշում էին, որ այդ հարցի քննությունը ենթակա է ՀՀ սահմանադրական դատարանին, մինչդեռ իրականում քաղաքացին վիճարկում էր հրամանագրի ոչ թե սահմանադրականությունը, այլ օրինականությունը¹:

Այս պրակտիկան վերացվեց միայն ՀՀ սահմանադրական դատարանի միջամտությամբ: ՀՀ սահմանադրական դատարանը 26.11.2006 թ. ՍԴՈ-665 որոշմամբ անդրադարձավ նաև իրավական ակտի՝ օրենքին և ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցերի սահմանազատման խնդրին:

¹ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունն ստուգելու գործառնությունը հրաժարվելու ոչ տեսանելի պատճառը քաղաքական իշխանությանը չհակադրվելու և նրանցից անվտանգ հեռավորություն պահելու դատարանների ձգտումն էր: Տե՛ս Ղամբարյան Ա. Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (մեթոդաբանական և համատեսական հիմնախնդիրներ): Եր.: ՌԷՆ, հրատ, 2013, էջ 260-261:

Այնուամենայնիվ, ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման չափացույցերի տարանջատման խնդիրը դրանով չլուծվեց: ՀՀ օրենսդիրը 2007 թ. վարչ. դատ. օր-ով գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ սահմանադրականության համապատասխանության հարցը որոշելը վերապահեց ՀՀ վարչական դատարանին²: Այսպես՝ 2007թ. ՀՀ վարչ. դատ. օր-ի 135-րդ հոդվածում սահմանվեց հետևյալ դրույթը.

«Վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը. 1) գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությունը համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը (...):»

Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ սահմանադրական արդարադատության գործառույթը ՀՀ վարչական դատարանին վերապահելու մոտեցումն իրավաբանական համայնքում առաջացրեց տարաձայնություններ: ՀՀ սահմանադրական դատարանն այս անգամ ևս ստիպված եղավ միջամտել հարցին:

Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու գործառույթը ՀՀ վարչական դատարանին վերապահելու Օրենսդրի մոտեցումը ՀՀ սահմանադրական դատարանը 25.11.2008 թ. ՄԴՈ-780 որոշմամբ որակեց համակարգային անկատարություն, քանի որ Օրենսդիրը, հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի միանշանակ պահանջը, վարչական արդարադատության ոլորտ է ներառել սահմանադրական արդարադատության առարկան: ՀՀ սահմանադրական դատարանը նշել էր, որ վարչական և սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար³:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատարանի՝ գերատեսչական ակտերի սահմանադրականությունը որոշելու և այն անվավեր ճանաչելու լիազորությունը վերացրեց միայն 05.12.2013 թ. ընդունված նոր ՀՀ վարչ. դատ. օր-ում⁴:

Հայ իրավագետներն առ այսօր միակարծիք չեն գերատեսչական ակտերի

² Ուժը կորցրել է 07.01.2014թ-ին:

³ ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թ. ՀՀ վարչ. դատ. օր-ի 135-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը համարել է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներին հակասող և այն որակել է երկրի իրավական անվտանգության սպառնալիք, սակայն որոշման եզրափակիչ մասում այն չի ճանաչել հակասահմանադրական: Դատարանը պարզապես կարևոր է համարել, որ ՀՀ ազգային ժողովն ուշադրություն դարձնի այս հիմնախնդրին:

⁴ Այս մասին տե՛ս Խանդանյան Ռ., Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն): Եր.: 2024:

սահմանադրականության և օրինականության չափացույցերի հարցում: Օրինակ՝ Գ. Դանիելյանը նշում է.

«(...) Ասվածից բխում է, որ մարդու իրավունքների վերաբերյալ ցանկացած գերատեսչական ակտ կարող է վիճարկվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին⁵ չհամապատասխանելու հիմքով, ուստի կարիք էլ չկա վիճարկելու դրա սահմանադրականությունը»⁶:

Նշված պատճառաբանությունից կարելի է ենթադրել, որ Գ. Դանիելյանը կասկածի տակ է դնում գերատեսչական ակտերի սահմանադրականության չափացույցի անհրաժեշտությունը, քանի որ ըստ նրա՝ մարդու իրավունքների ոլորտում գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարց չէր կարող ծագել, քանի որ նման ակտերը կարող էին հակասել միայն 2002 թ. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածին:

Դրան հակառակ՝ գերմանական իրավունքի տրամաբանությամբ մտածող այլ իրավաբաններ շարունակում են նշել, որ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության չափացույցն անհրաժեշտ է, և գերատեսչական ակտերը հակասահմանադրականության հիմքով կարող է վերացնել (անվավեր ճանաչել) ոչ թե ՀՀ սահմանադրական դատարանը, այլ ՀՀ վարչական դատարանը⁷:

Գործնականում ՀՀ սահմանադրական դատարանը և ՀՀ վարչական դատարանը ևս չեն կարողանում կամ չեն ցանկանում սահմանազատել ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականությունը և օրինականությունը, որոնք նաև նրանց լիազորությունների տարանջատման չափանիշներ են: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը»:

Օրենքի այս դրույթից հասկանալի է, որ ՀՀ առողջապահության նախարարը ենթաօրենսդրական ակտով կարող է կարգավորել անհատական պաշտպանության միջոցների կիրառման, սանիտարահամաճարակային անվտանգության կանոններին առնչվող հարցերը, բայց ոչ ֆինանսական բնույթի հարցեր: Մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարը, դուրս գալով լիազորող նորմի սահմաններից, 20.08.2021 թ. ընդունել է N 65-Ն հրամանը, որի 1-ին կետով աշխատողների համար սահմանել է հետևյալ պարտականությունը.

⁵ Ուժը կորցրել է 07.04.2018 թ.:

⁶ Դանիելյան Գ. Բ., Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ, Եր.: Տիգրան Մեծ, 2011, էջեր 305-306:

⁷ Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր.: 2020, էջեր 155-156:

«Աշխատողները յուրաքանչյուր 14 օրը մեկ ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության (այսուհետ՝ ՊՇՌ հետազոտություն) բացասական արդյունքը հավաստող (...) սերտիֆիկատ (...): **ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն իր հաշվին** (ընդգծումը՝ հեղ.)»:

ՀՀ առողջապահության նախարարի այս հրամանի իրավաչափությունը պետք է ստուգել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի (վարչարարության օրինականությունը), «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի տեսանկյունից, թե՞ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի (օրինականության սկզբունքը) համապատասխանության տեսանկյունից:

Նշված դեպքով ակնհայտ էր, որ ՀՀ առողջապահության նախարարը դուրս է եկել օրենքով սահմանված իր առարկայական իրավասության սահմաններից, քանի որ վերը նշված օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասը չի լիազորում Նախարարին ենթաօրենսդրական ակտով սահմանելու ֆինանսական բնույթի հարցը: Թեև Նախարարի հրամանն առաջին հերթին հակասում էր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով, սակայն ՀՀ սահմանադրական դատարանը նշված գործն ընդունել է վարույթ և Նախարարի ենթաօրենսդրական ակտի իրավաչափությունն ստուգել է սահմանադրականության տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրական դատարանը 23.12.2021 թ. ՍԴՌ-1621 որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարի քննարկվող հրամանի՝ «ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին:» նախադասության «իր հաշվին» բառակապակցությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին և 39-րդ հոդվածին հակասող և անվավեր՝ նկատի առնելով, որ ՊՇՌ հետազոտության ծառայությունից օգտվելիս դրա դիմաց վճարման պարտականություն ունեցողների շրջանակի սահմանումը դուրս է ՀՀ առողջապահության նախարարի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից:

ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է, որ Նախարարը դուրս է եկել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորության սահմաններից, ինչը նշանակում է, որ Նախարարի հրամանի վիճարկվող դրույթն անմիջապես հակասում էր ոչ թե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին, այլ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին:

Բոլոր դեպքերում փաստ է, որ այս գործով իրականացվել է ոչ թե վարչական, այլ սահմանադրական արդարադատություն: Ստացվում է, որ եթե օրենքով սահմանված է, որ գործադիր իշխանության մարմիններն ունեն «X» հարցերի շրջանակում ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորություն, սակայն այդ մարմինը դուրս է գալիս այդ լիազորության շրջանակից և կարգավորում է նաև այլ հարաբերություն, ապա դա ոչ թե այդ ակտի օրինականության, այլ սահմանադրականության հարց է (նման ակտերը հակասում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին), ուստի նման հարցերը պետք է քննի ՀՀ սահմանադրական դատարանը: ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված գործով մոտեցումը չպետք է վերաճի կայուն պրակտիկայի:

Իրականում քիչ հավանական է, որ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտը, որը հիմնված է օրենքի վրա (խոսքը չի վերաբերում գործադիր իշխանության ռեզլամենտային ակտերին, որոնք ՀՀ իրավական համակարգում նախատեսված չեն⁸ կամ այն որոշումներին, որոնք սխալմամբ նշված են «Ն» (նորմատիվ) տառով, թեև դրանք ակնհայտորեն անհատական իրավական ակտեր են,⁹), կարող է ուղիղ (անմիջապես) հակասել ՀՀ Սահմանադրությանը: Եթե ենթաօրենսդրական ակտը հիմնված է օրենքի վրա, սակայն դրանով իսկ վնասում է սահմանադրական արժեքներ, ապա պետք է քննարկել օրենքի և դրա վրա հիմնված ենթաօրենսդրական ակտի սահմանադրականության հարցը: Իսկ եթե ենթաօրենսդրական ակտը հիմնված չէ օրենքի վրա, այսինքն՝ կարգավորում է հարաբերություններ, որոնք նախատեսված չեն օրենքով, ապա այս պարագայում պետք է քննարկել ենթաօրենսդրական ակտի օրինականության հարցը:

Այս ամենից պարզ է դառնում, որ ՀՀ իրավական համակարգը դեռևս չի կարողացել կողմնորոշվել ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության և օրինականության սահմանազատման հարցում, սակայն այս չլուծված խնդրին ՀՀ վճռաբեկ դատարանը ավելացրել է ևս մեկը՝ ենթաօրենսդրական ակտերի կոնվենցիոնալությունը, որը ոչ միայն չլուծված խնդրին մեկ այլ խնդրով հավելում է, այլև պարունակում է ՀՀ վարչական դատարանի կողմից ենթաօրենսդրական ակտերի միջազգային պայմանագրերին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու եղանակով սահմանադրական արդարադատությունը շրջանցելու և Հայաստանի իրավական անվտանգությանը (ինքնիշխանությանը) վնասելու ռիսկեր:

1.3. Ենթաօրենսդրական ակտերի կոնվենցիոնալության չափացույցի անկենսունակությունը

Ենթաօրենսդրական ակտի կոնվենցիոնալությունը հիմնականում ոչ կենսունակ կամ առարկայազուրկ չափացույց է, քանի որ, որպես կանոն, քիչ հավանական է, որ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտն անմիջապես (ուղիղ) հակասի

⁸ Ենթաօրենսդրական և ռեզլամենտային ակտերի հարաբերակցության մասին տե՛ս Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Եր.: 2024, էջեր 263-271:

⁹ Այս մասին՝ մանրամասն 4-րդ բաժնում:

միջազգային պայմանագրին՝ չհակասելով օրենքին: Ինչպես նշվեց, դասական իմաստով ենթաօրենսդրական ակտը հիմնված է օրենքի վրա, այսինքն՝ ընդունվում է օրենքով նախատեսված դեպքերում և ի կատարումն օրենքի (օրենքի վերապահում): Եթե ենթաօրենսդրական ակտն ընդունվել է օրենքով նախատեսված դեպքում և ի կատարումն օրենքի, ապա այս պարագայում կոնվենցիային կարող է հակասել օրենքը և դրա վրա հիմնված ենթաօրենսդրական ակտը: Ենթաօրենսդրական ակտն այս պարագայում, որպես կանոն, ուղիղ չի կարող հակասել կոնվենցիային: Եթե ենթաօրենսդրական ակտն ընդունվել է առանց օրենքի վերապահման և խաթարել է արժեքներ, որոնք սահմանված են նաև կոնվենցիայով, ապա այս պարագայում պետք է քննարկել ոչ թե ենթաօրենսդրական ակտի համապատասխանությունն անմիջապես կոնվենցիային, այլ օրենքին:

Այս ամենը ներկայացնենք կոնկրետ օրինակով: Հայաստանի կողմից 01.09.2012 թ. վավերացված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 3-րդ մասով ուղիղ սահմանված է, որ վերահսկիչ մարմինները (լիազոր մարմինը՝ հեղ.) պետք է իրենց գործառույթներն իրականացնեն լիովին անկախ:

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի անկախության մասին դրույթ նախատեսված է նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը գործում է անկախ:

ՀՀ կառավարության՝ 2015թ. հուլիսի 2-ի 734-Ն որոշմամբ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ արդարադատության նախարարության ստորաբաժանում համարվող անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը: Այս կարգավորումը խաթարում է լիազոր մարմնի անկախության պահանջը, քանի որ վարչաիրավական տրամաբանությամբ ՀՀ արդարադատության նախարարը համարվում է նախարարության ստորաբաժանման վերադասը և այդ ստորաբաժանման ղեկավարին կարող է ցուցումներ (հանձնարարություններ) տալ:

Այս իրավիճակում ՀՀ կառավարության 734-Ն որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության որևէ ստորաբաժանում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին ճանաչելն առաջին հերթին հակասում է ոչ թե վերը նշված կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 3-րդ մասին, այլ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասին:

Ենթադրենք՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում էքսպլիցիտ (ուղիղ) նշված չէ լիազոր մարմնի անկախության մասին դրույթ: Նույնիսկ այս պարագայում պետք է քննարկել ոչ թե ենթաօրենսդրական ակտի կոնվենցիոնալությունը, այլ օրինականությունը, քանի որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքն այս հարցում ինքնաբավ է, այսինքն՝ պարունակում է մի շարք նորմեր, որոնցից հստակ բխում է լիազոր մարմնի անկախության մասին պահանջը: Օրինակ՝ նշված օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված է՝

անձնական տվյալներ մշակելու ոլորտում օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը: Եթե լիազոր մարմինն անկախ չլինի որևէ նախարարությունից, ապա չի կարող իրականացնել համապատասխան նախարարության՝ որպես տվյալ մշակողի նկատմամբ հսկողության գործառույթը: Այս դրույթը բավարար է լիազոր մարմնի անկախության պահանջը բխեցնելու համար:

Այսպիսով, եթե նույնիսկ օրենքով ուղիղ նախատեսված չլինեք լիազոր մարմնի անկախության մասին դրույթ, ապա անկախության պահանջը հնարավոր է բխեցնել օրենքի մի շարք կարգավորումներից: Այս պարագայում վերը նշված կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 3-րդ մասը կարող է հիշատակվել ոչ թե որպես ենթաօրենսդրական ակտի իրավաչափության ստուգման չափացույց, այլ ներպետական օրենքով իմպլիցիտ նախատեսված՝ լիազոր մարմնի անկախության սկզբունքի գոյության լրացուցիչ հիմնավորում:

Այս ամենի հիմքում ընկած է ազգային իրավական համակարգի ինքնաբավության սկզբունքը: Ազգային իրավունքը պարունակում է բավարար կարգավորումներ, որոնք թույլ կտան որոշելու ենթաօրենսդրական ակտերի իրավաչափությունը: Եթե ՀՀ դատարանները հարգանքով վերաբերվեն ազգային իրավական համակարգի ինքնաբավությանը, ապա, անկասկած, ներպետական իրավունքի սահմաններում կարող են գտնել այն կարգավորիչները, որոնք կհանդիսանան ենթաօրենսդրական ակտերի իրավաչափությունն ստուգելու չափացույց¹⁰: Ընդ որում՝ ազգային իրավական համակարգի ռեսուրսների միջոցով ենթաօրենսդրական ակտերի օրինականությունը որոշելու խողովակով ՀՀ դատարանները կարող են ապահովել նաև միջազգային պարտականությունների կատարման (pacta sunt servanda) պահանջը:

Այժմ անդրադառնանք գլխավոր հարցին, թե ՀՀ վարչ. դատ. օր-ի 26-րդ գլխի կարգավորումների տեսանկյունից ՀՀ վարչական դատարաններն արդյո՞ք իրավասու են քննելու ենթաօրենսդրական ակտի կոնվենցիոնալությունը և միջազգային պայմանագրին հակասելու հիմքով այն անվավեր ճանաչել:

Այս հարցին պատասխանելու համար նախ անհրաժեշտ է քննարկել հետևյալ ենթահարցերը՝

1) միջազգային պայմանագրին արդյո՞ք նորմատիվ իրավական ակտ է (ինչ տեղ է զբաղեցնում իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգում),

2) եթե՝ այո, ապա՝ միջազգային պայմանագրին ինչ տեղ է զբաղեցնում նորմատիվ իրավական ակտերի (օրենսդրության) աստիճանակարգության համակարգում,

3) ռեալիստական և իրավահամեմատական տեսանկյուններից արդյո՞ք հիմնավորվում է ենթաօրենսդրական ակտերը կոնվենցիային հակասելու հիմքով անվավեր ճանաչելու գաղափարը:

¹⁰ Խոսքը վերաբերում է նաև վերպետական միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ ԵԱՏՄ իրավական ակտերին:

2. Նորմատիվ (միջազգային) պայմանագիրն իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգում

2.1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/9227/05/23 գործով 25.09.2024 թ. որոշմամբ գործածել է մի շարք ձևակերպումներ, որոնք կարիք ունեն առանձին քննարկման:

Նախ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը միջազգային պայմանագրի «պարտադիրությունը» կամ «պարտադիր կիրառելիության» հատկանիշը կարծես բխեցրել է միջազգային պայմանագրի վավերացման միջոցով ՀՀ օրենսդրության մաս հանդիսանալու փաստից: Այսպես, Դատարանը նշել է.

«(...) միջազգային պայմանագրի վավերացման միջոցով այդ պայմանագիրը ՀՀ համար ճանաչվում է պարտադիր: Այսինքն՝ վավերացման միջոցով միջազգային պայմանագիրն ընդգրկվում է ներպետական օրենսդրություն և դառնում դրա մի մասնիկը՝ օժտվելով պարտադիր կիրառելիության հատկանիշով:»:

Միջազգային պայմանագրի պարտադիրությունը որևէ կապ չունի դրա օրենսդրության մաս լինելու (նորմատիվ իրավական ակտ հանդիսանալու) փաստի հետ: Միջազգային պայմանագրի նորմատիվությունը (համապարտադիրությունը) ֆորմալ-իրավաբանական տեսանկյունից պայմանավորված է նրա վավերացման փաստով, որի ուժով այն դառնում է ՀՀ իրավական համակարգի մաս, այսինքն՝ ի թիվս իրավունքի այլ աղբյուրների՝ դառնում է իրավունքի ինքնուրույն պաշտոնական աղբյուր:

Երկրորդ՝ առաջին հայացքից կարող է թվալ, որ ՀՀ վճռաբեկ դատարանը միջազգային պայմանագրի՝ ներպետական օրենսդրությունում ընդգրկելու մասին նշելիս օրենսդրության համակարգը շփոթել է իրավական համակարգի հետ: Մակայն դատական ակտի ձևակերպումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նա ոչ թե շփոթել է «օրենսդրության համակարգ» և «իրավական համակարգ» հասկացությունները, այլ միջազգային պայմանագիրը գիտակցված կերպով համարել է հենց ՀՀ օրենսդրության մաս: Նա արտահայտել է հետևյալ մտքերը. «միջազգային պայմանագիրն այդպիսով ոչ միայն դառնում է իրավական համակարգի մի մասը, այլև ընդգրկվում է ներպետական օրենսդրությունում», կամ «Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագիր է, որը, վավերացման փաստով պայմանավորված, ներմուծվել է ՀՀ իրավական համակարգ՝ դառնալով օրենսդրության մի մասը»: Այս ձևակերպումներից պարզ է դառնում, որ նա մի քանի անգամ շեշտված կերպով ցույց է տվել, որ միջազգային պայմանագիրը ոչ միայն իրավական համակարգի մաս է, այլ նաև օրենսդրության մաս է:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ միջազգային պայմանագիրը որպես օրենսդրության մաս (նորմատիվ իրավական ակտ) համարելու մոտեցման իրավաչափությունը պետք է քննարկել ինչպես իրավունքի աղբյուրների վերաբերյալ դոկտրինի, այնպես էլ ՀՀ պոզիտիվ իրավունքի տեսանկյունից:

2.2. Նորմատիվ իրավական ակտի և նորմատիվ (միջազգային) պայմանագրի հարաբերակցությունն իրավաբանական դոկտրինում

Պատմականորեն օրենքի (նորմատիվ իրավական ակտի) և պայմանագրի հարաբերությունների զարգացումը եղել է հակասական: Հռոմեացի իրավաբանները և՛ օրենքը, և՛ սովորույթները համարում էին համաձայնություն (պայմանագիր), մինչդեռ դեռ բնական իրավունքի դպրոցը պայմանագիրը համարում էր պոզիտիվ իրավունքի միակ աղբյուրը: Այս երկու մոտեցումներն էլ ծայրահեղություններ էին: Ցարական ռուսաստանում առանձին իրավաբան-գիտնականներ պայմանագիրն օրենքի և սովորույթների հետ միասին համարում էին իրավունքի ինքնուրույն աղբյուր¹¹:

Խորհրդային իրավագիտությունում նորմատիվ պայմանագիրն իրավունքի աղբյուրների համակարգում առհասարակ չէր դիտարկվում¹², կամ նորմատիվ պայմանագիրը համարվում էր ոչ թե իրավունքի ինքնուրույն աղբյուր, այլ որպես նորմատիվ իրավական ակտի տեսակ¹³:

Խորհրդային հայտնի տեսաբան Ս. Ս. Ալեքսենը նորմատիվ իրավական ակտերի համակարգը քննարկելիս, բացի օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից, **այլ հարթություններում** առանձնացնում էր նորմատիվ իրավական ակտերի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ ներքին ներգործությամբ նորմատիվ ակտերը (մեր ընկալմամբ՝ լոկալ իրավական ակտերը), հասարակական կազմակերպությունների իրավական ակտերը, համատեղ իրավական ակտերը, որոնց շարքին դասում էր նաև նորմատիվ պայմանագրերը¹⁴: Տեսաբանը նորմատիվ իրավական ակտի այս տեսակներն առանձնացնում էր «այլ հարթություններում», սակայն չէր հստակեցնում, թե ինչ նկատի ունի «այլ հարթություն» ասելով: Ենթադրում ենք, որ «այլ հարթություն» ձևակերպմամբ հեղինակը փորձել է նորմատիվ պայմանագիրն առանձնացնել դասական իմաստով նորմատիվ իրավական ակտերից՝ օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից: Այնուամենայնիվ, փաստն այն է, որ նա նորմատիվ պայմանագիրը դիտարկում էր ոչ թե որպես իրավունքի ինքնուրույն աղբյուր, այլ նորմատիվ իրավական ակտերի տեսակ¹⁵:

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ հարաբերությունների կարգավորման ապակենտրոնացման (պայմանագրային) մեթոդն սկսվեց արժևորվել, հետխորհրդային իրավաբանական դոկտրինում նորմատիվ պայմանագիրն առանձնացվեց նորմատիվ իրավական ակտից, և իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգում այն դիտարկվեց որպես իրավական նորմերի ամրագրման ինքնուրույն ձև:

¹¹ Тарановский Ф. В. Учебник энциклопедии права. Юрьев. Типография К. Матиссена, 1917. С. 186.

¹² Голунский С. А., Строгович М. С. Теория государства и права: учебник. М.: Юридическое издательство НКЮ СССР, Академия наук СССР, Институт права. 1940. С. 173.

¹³ Александров Н. Г. К вопросу о роли договора в правовом регулировании общественных отношений // Ученые записки ВИЮН. М., Юрид. Изд. Министерства юстиции СССР, 1946. Вып. VI, С. 82.

¹⁴ Алексеев С. С. Общая теория права: учебник. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Проспект, 2008. С. 455-457.

¹⁵ ՀՀ իրավական համակարգի տեսանկյունից հետաքրքրական է նաև համատեղ նորմատիվ իրավական ակտերի և նորմատիվ պայմանագրերի հարաբերակցությունը, որը դուրս է սույն հոդվածի առարկայից:

Այսօր կարող ենք փաստել, որ նորմատիվ իրավական ակտի և նորմատիվ պայմանագրի իրարից տարանջատելը և որպես ինքնուրույն իրավունքի աղբյուրներ դիտարկելն ստացել է համընդհանուր ճանաչում. պետության և իրավունքի տեսության ժամանակակից դասագրքերում¹⁶ և գիտական աշխատություններում¹⁷ գրեթե անվիճելի է, որ նորմատիվ իրավական ակտը և նորմատիվ պայմանագիրը, թեև ունեն ընդհանրություններ, սակայն դրանք առանձին աղբյուրներ են: Այսինքն՝ դոկտրինալ հարթությունում նորմատիվ պայմանագիրն այլևս չի դիտարկվում որպես նորմատիվ իրավական ակտի տեսակ և օրենսդրության մաս:

Ի հակադրություն իրավական դոկտրինի այս զարգացումներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նորմատիվ պայմանագիրը (միջազգային պայմանագիրը) համարել է նորմատիվ իրավական ակտ և օրենսդրության մաս:

2.3. Նորմատիվ իրավական ակտի և նորմատիվ (միջազգային) պայմանագրի հարաբերակցությունը ՀՀ պոզիտիվ իրավունքի տեսանկյունից

2.3.1. Հարաբերակցությունն ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի: ՀՀ օրենսդրության տեսանկյունից միջազգային պայմանագրերը համարվում են արդյոք օրենսդրության մաս, թե՞ ոչ: Այս հարցի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունում առկա են հակասական կարգավորումներ:

Եղել է պատմական ժամանակաշրջան (2002-2018 թթ.), երբ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում միջազգային պայմանագիրը դիտարկվում էր որպես նորմատիվ իրավական ակտ: Այդ ժամանակաշրջանում նույնիսկ ՀՀ սահմանադրական դատարանն է նշել, որ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են (03.06.2011 թ. ՍԴՈ-966 որոշում):

¹⁶ Теория государства и права: учебник / под ред. Р. А. Ромашова. СПб.: Изд. Р. Асланова «Юридический центр Пресс», 2005. С. 220, Червонюк В. И. Теория государства и права: учебник. М.: Изд. ИНФРА-М, 2006. С. 261, 265-268, Радько Т. Н. Теория государства и права: учебник. 2-е изд. М.: Изд. Проспект, 2011. С. 295, 306, Теория государства и права: учебник / Под ред. А.В. Малько, А.Ю. Саломатина. 3-е изд., перераб. и доп. СПб.: Изд. «Юридический центр», 2016. С.174, Перевалов В. Д. Теория государства и права: учебник. 5-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2018. С. 140-141, Протасов В. Н. Теория государства и права: учебник. М.: Изд. Юрайт, 2018. С. 212-213, Сорокин В. В. Фундаментальная теория права: монография. М.: Изд. Юрлитинформ, 2020. С. 311, 316, Теория государства и права: учебник / под ред. Е. Е. Тонкова, М.В. Мархгейм. М.: Изд. Юрлитинформ, 2021. С. 245, 247, Общая теория права: классические и современные вопросы: учебник. М.: Изд. Юрлитинформ, 2021. С. 143, Антонов М. В. Теория государства и права: учебник. М.: Изд. Юрайт, 2023. С. 454-455, Теория государства и права: учебник / под ред. В. Н. Жукова, Е. А. Фроловой. М.: Изд. Проспект, 2024. С. 300, 308-309, Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Հեղ. խումբ: գիտ. խմբ.՝ Ս. Ղամբարյան, Մ. Մուրադյան. 4-րդ հրատ., Եր.: Լուսարաց հրատարակչատուն, 2023:

¹⁷ Марченко М. Н. Источники права: учеб. пособие. М.: Изд. Проспект, 2005. С. 288, Овсепян Ж. И. Источники (формы) российского права в период международной глобализации (общетеоретическое и конституционно-правовое исследование): монография. М.: Изд. Проспект, 2016. С. 304, Кухнина Л. Ю. Гибридные источники права: проблемы формирования и перспективы развития. М.: Изд. Юрлитинформ, 2018. С. 56-57, Дробышевский С. А., Данцева Т. Н. Формальные источники права: монография. М.: Изд. Норма : ИНФРА-М, 2022. С.107-108, Истоки и источники права: генезис и эволюция: монография / под ред. Р. А. Ромашова. СПб.: Алетея, 2022. С. 148-149, 179-206

Միջազգային պայմանագիրը՝ որպես նորմատիվ իրավական ակտ դիտելու Օրենսդրի մոտեցումը հայ իրավաբանների կողմից արժանացել է քննադատության¹⁸: Օրենսդիրը 2018 թ. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն ընդունելիս հրաժարվեց միջազգային պայմանագիրը նորմատիվ իրավական ակտ որակելու մոտեցումից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նկատել է իրավունքի զարգացման այս ընթացքը, սակայն ի հակադրություն դրան, նշել է.

«Նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը միջազգային պայմանագրերն ընդգրկում էր Հայաստանի Հանրապետությունում ընդունվող իրավական ակտերի շարքում, մինչդեռ ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նման կարգավորում առկա չէ: Այնուամենայնիվ, (...)»

ՀՀ վճռաբեկ դատարանի համար հասկանալի է եղել, որ Օրենսդիրը հրաժարվել է միջազգային պայմանագիրը նորմատիվ իրավական ակտ որակելու մոտեցումից, սակայն, ի հակառակ այդ մոտեցման, այն համարել է նորմատիվ իրավական ակտ:

Ավելին, Օրենսդիրը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում տվել է ոչ միայն նորմատիվ իրավական ակտերի բնորոշումը, այլ նաև տվել է օրենսդրության բնորոշումը (դրա տարրերի թվարկումը): Այսպես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ օրենսդրությունն օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ամբողջությունն է, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենսդրական ակտերն են՝ ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները և օրենքները: ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրության մաս չեն, դրանք ո՛չ օրենքներ են, ո՛չ էլ ենթաօրենսդրական ակտեր:

Հստակ է, որ Օրենսդիրը միջազգային պայմանագիրը չի համարել օրենսդրության մաս, մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանը, առանց որևէ իրավաչափ նպատակի, հակադրվել է այս կարգավորմանը: Ընդ որում՝ նա փորձել է այս մոտեցումն արդարացնել «pacta sunt servanda» միջազգային իրավունքի սկզբունքով, որի համաձայն՝ յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի: Միջազգային իրավունքի այս սկզբունքը պահպանելու համար բնավ անհրաժեշտ չէր հակադրվել ներպետական օրենսդրությանը և միջազգային պայմանագիրը որակել որպես օրենսդրության մաս (այս մասին հաջորդիվ):

2.3.2. Հարաբերակցությունն ըստ ճյուղային օրենսդրության: Բացի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքից՝ ճյուղային այլ օրենքներում ևս առկա են քննարկվող հարցին վերաբերող կարգավորումներ: Կարելի է առանձնացնել օրենքների երկու խումբ, որոնցից մի խումբը դեռևս շարունակում է միջազգային պայմանագիրը համարել օրենսդրության մաս, իսկ մյուս մասը՝ ոչ:

¹⁸ Гамбарян А., Даллакян Л. Нормативный договор в системе источников права // Դատական իշխանություն, 2009, № 7(120), էջեր 21-26:

Առաջին խումբ օրենքների պարագայում Օրենսդիրը հիմնականում ուղիղ չի նշել, որ միջազգային պայմանագիրը համարում է օրենսդրության մաս: Մենք դա բխեցնում ենք հոդվածների վերտառությունից: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 1-ին հոդվածը վերնագրված է «Քրեական վարույթը կարգավորող օրենսդրությունը», որտեղ նշված է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական վարույթը կարգավորվում է Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ՀՀ դատական օրենսգրքով և ՀՀ քր. դատ. օր-ով: Այս պարագայում Օրենսդիրն ուղիղ չի նշել, որ միջազգային պայմանագիրը քրեադատավարական օրենսդրության մաս է, պարզապես հոդվածի վերնագրից կարելի է կատարել նման եզրահանգում:

2.3.2.1. Օրենքներ, որոնցում միջազգային պայմանագիրը համարվում է օրենսդրության մաս: 09.11.2004 թ. ընդունված ՀՀ ընտանեկան օրենսգրքի 3-րդ հոդվածի (Ընտանեկան հարաբերություններ կարգավորող ՀՀ օրենսդրությունը) 1-ին մասում թվարկված են ՀՀ ընտանեկան հարաբերությունները կարգավորող ակտերը, որոնց ցանկում նշված է նաև միջազգային պայմանագրերը: Այս օրենքում ուղիղ նշված չէ, որ միջազգային պայմանագիրն ընտանեկան օրենսդրության մաս է, պարզապես հոդվածի վերտառությունից եզրակացնում ենք, որ միջազգային պայմանագիրը համարվել է ընտանեկան օրենսդրության մաս:

15.06.2022 թ. ընդունված ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասում ուղիղ նշված է, որ ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից, ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերից, պատիժների կատարման ու պատժից ազատելու կարգն ու պայմանները կարգավորող օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն այն եզակի ճյուղային օրենքներից է, որտեղ ուղիղ նշված է, որ միջազգային պայմանագիրը քրեակատարողական օրենսդրության մաս է:

2.3.2.1. Օրենքներ, որոնցում միջազգային պայմանագիրը չի համարվում օրենսդրության մաս: 05.05.1998 թ. ընդունված ՀՀ քաղ. օր-ի 1-ին հոդվածի վերտառության մեջ իրավացիորեն «Քաղաքացիական օրենսդրություն» և «քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտեր» ձևակերպումները տարբերակված են, իսկ 6-րդ հոդվածի վերտառությունը ձևակերպված է հետևյալ կերպ. «Քաղաքացիական օրենսդրությունը, այլ իրավական ակտերը և միջազգային պայմանագրերը»: Հստակ է, որ ՀՀ քաղ. օր-ում քաղաքացիական օրենսդրությունը և քաղաքացիաիրավական նորմեր պարունակող միջազգային պայմանագրերը դիտարկվել են իրավունքի ինքնուրույն աղբյուրներ, ինչը համահունչ է իրավունքի աղբյուրների ժամանակակից տեսությանը:

02.05.2001 թ. ընդունված ՀՀ Հողային օրենսգրքի 1-ին հոդվածի վերտառության մեջ ևս տարբերակված են հողային օրենսդրությունը և հողային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը: Նշված հոդվածի 1-ին մասում թվարկվում է հողային օրենսդրությունը, որտեղ միջազգային պայմանագրերը նախատեսված չեն: Նշված հոդվածում նախատեսված է միայն միջազգային

պայմանագրի և օրենքների հակասությունը միջազգային պայմանագրի օգտին լուծելու կոլիզիոն նորմ:

Համանման կարգավորում նախատեսված է նաև 24.10.2005 թ. ընդունված ՀՀ անտառային օրենսգրքի 2-րդ հոդվածում:

05.12.2013 թ. ընդունված ՀՀ վարչ. դատ. օր -ի 2-րդ հոդվածի վերտառության մեջ նշված է «Վարչական դատավարության մասին օրենսդրությունը», սակայն հոդվածի բովանդակության մեջ թվարկված են վարչական դատավարության կարգը սահմանող նորմատիվ իրավական ակտերը, իսկ միջազգային պայմանագրի մասին հիշատակում նախատեսված չէ:

04.10.2016 թ. ընդունված ՀՀ հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի վերտառության մեջ «օրենսդրություն» եզրույթի փոխարեն նշված է «Հարկային հարաբերությունների կարգավորումը», իսկ հարկային հարաբերությունները կարգավորող իրավունքի աղբյուրների ցանկում նշված են ինչպես նորմատիվ իրավական ակտերը, այնպես էլ միջազգային պայմանագրերը: Այս ձևակերպումների պարագայում կարող ենք ասել, որ ՀՀ հարկային օրենսգրքի պարագայում Օրենսդիրը միջազգային պայմանագիրը ևս չի համարել օրենսդրության մաս:

09.02.2018 թ. ընունված ՀՀ քաղ. դատ. օր-ի 4-րդ հոդվածում ևս չի գործածել «օրենսդրություն» բառը, այլ թվարկել է, թե դատարանն իրավունքի որ աղբյուրներում ամրագրված նորմեր կարող է կիրառել: Այս ցանկում ոչ միայն նորմատիվ իրավական ակտերն են, այլ նաև միջազգային պայմանագրերը:

3. Արդյո՞ք միջազգային պայմանագրերն իրավական նորմերի աստիճանակարգությունում հաջորդում են ՀՀ Սահմանադրությանը:

3.1. Ընդհանուր դրույթներ: Միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության հարցերը նախկինում էական նշանակություն չեն ունեցել իրավագիտության շրջանակներում: Դրա պատճառներից է այն, որ միջազգային իրավունքը («ազգերի իրավունք») չի դիտարկվել որպես առանձին իրավունքի համակարգ: Չպետք է մոռանալ, որ մինչև Նոր ժամանակները Եվրոպայում միջազգային հարաբերությունները կարգավորվում էին ոչ միայն «ազգերի իրավունքով», այլև հռոմեական, կանոնական, առևտրային, ծովային իրավունքի նորմերով, որոնք լրացնում էին ընդհանուր անգլիական իրավունքը, ստատուտային իրավունքը¹⁹: Այն, որ վերը նշված իրավունքի նորմերը կարող էին սահմանել անձանց համար իրավունքներ և պարտականություններ, հակադրվում են այն տեսություններին, որոնք բացառում էին միջազգային նորմերի անմիջական գործողության հնարավորությունը: Այդ պատճառով 18-րդ դարի կեսերին բրիտանացի իրավաբան Ու. Բլեկստոնն առաջադրեց այսպես կոչված «ինկորպորացիայի» դոկտրինը, որի էությունն այն էր, որ միջազգային իրավունքի նորմերն ազգային իրավունքի մաս են

¹⁹ Батлер У.Э. Взаимодействие международного и национального права (на примере Великобритании) // Советское государство и право. 1987. N 5. С. 112.

կազմում և անմիջականորեն կարող են կիրառվել²⁰:

Միջազգային իրավունքի և ազգային իրավունքի հարաբերակցության հարցերն ունեն ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ մեծ նշանակություն: Մինչ օրս չեն դադարում հիմնահարցի շուրջ քննարկումները հատկապես միջազգային և սահմանադրական իրավունքի շրջանակներում:

3.2.Միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության տեսական մոտեցումները: Դուալիզմ և մոնիզմ: Ի սկզբանե միջազգային իրավունքի և ազգային իրավունքի հարաբերակցության հարցերը մշակվել են Անգլիայում: Լորդ-կանցլեր Տալբոտը դեռևս 1737 թվականին միջազգային իրավունքը համարում էր ընդհանուր իրավունքի²¹ (Common Law) մաս²²: Ավելի ուշ հիմնահարցի վերաբերյալ առաջին համապարփակ աշխատությունը լույս է տեսել 1899 թվականին գերմանացի նշանավոր տեսաբան Հ. Թրիփելի հեղինակությամբ²³:

Իրավաբանական գրականության մեջ ընդունված է տարբերակել միջազգային իրավունքի և ազգային իրավունքի հարաբերակցության 2 հիմնական ուղղություն՝ դուալիստական և մոնիստական²⁴, որոնք իրենց հերթին բաժանվում են առանձին ենթաուղղությունների:

Դուալիստական մոտեցման կողմնակիցները (Հ. Թրիպել, Դ. Անցիլոտի, Լ. Օպպենհեյմ²⁵) միջազգային և ազգային իրավունքները դիտարկում են որպես ինքնուրույն, առանձին համակարգեր: Լ. Ֆ. Բրավոյի դիտարկմամբ՝ այս մոտեցման առաջացման պատճառներից է 19-րդ դարի վերջին եվրոպական պետությունների կողմից նոր սահմանադրությունների ընդունումը: Այդ համատեքստում կարևորվեց միջազգային չափանիշների ազգային իրավունքի ոլորտում կիրառման հարցը²⁶:

Հ. Թրիփելը նշում է՝

Միջազգային և ազգային իրավունքները ոչ միայն իրավունքի առանձին ճյուղեր են, նաև առանձին իրավակարգեր են: Դրանք երկու օղակներ են, որոնք միմյանց շոշափում են, սակայն չեն հատվում²⁷:

²⁰ Brownlie I. Principles of International Public Law. Oxford, 1990. P. 43 - 48.

²¹ Ընդհանուր իրավունքի մասին տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ /Հեղ. Խումբ: Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.- 4 -րդ լրամշակված հրատ.-Եր.: «Լուսաբաց հրատարակչատուն», 2023. Էջեր՝ 451-454:

²² Международное право = Völkerrecht / Вольфганг Граф Витцтум [и др.]; пер с нем., 2-е изд. / [В. Бергманн, сост.]. – М.: Инфотропик Медиа, 2015. С. 124.

²³ Ավելի վաղ ռուս մինչհեղափոխական տեսաբաններ Լ. Կամարովսկին և Ֆ. Մարտենյեն անդրադարձել են միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության հարցերին: Այս մասին տե՛ս Камаровский Л. А. Основные вопросы науки международного права. М., 1892. С. 33 – 34. 41;

²⁴ Бекашев К. А, Ануфриева Л. П., Устинов В. В. Международное публичное право : учеб. 4-е изд., перераб. и доп. М., 2005. – С. 429.

²⁵ Оппенгейм Л. Международное право. М.: Иностр. лит., 1948. Т. 1. Полутом 1. С.54-56.

²⁶ Браво Л. Ф. Применение международного права в правопорядке европейских стран // Российский ежегодник международного права. 1995. СПб., 1996. С. 131.

²⁷ Հղումը՝ Мюллерсон, Р. А. Соотношение международного и национального права. М., 1982. С. 10. Այս մասին տե՛ս նաև՝ Международное право = Völkerrecht / Вольфганг Граф Витцтум [и др.]; пер с нем., 2-е изд. / [В. Бергманн, сост.]. – М.: Инфотропик Медиа, 2015. С. 124.

Հ. Թրիփելն այս երկու համակարգերի հիմնական տարբերությունները նշելիս ընդգծում է, որ ներպետական իրավունքի սուբյեկտները ֆիզիկական անձինք են, մինչդեռ միջազգային իրավունքինը՝ միայն պետությունները, եթե ներպետական իրավունքի աղբյուրը կոնկրետ պետության կամքն է, ապա միջազգային իրավունքի աղբյուրը պետությունների ընդհանուր կամքն է (*Gemeinwille*)²⁸։ Այստեղ խոսքն այդ համակարգերի կարգավորման տարբեր առարկաներ ունենալու, իրավունքի տարբեր սուբյեկտների և աղբյուրների մասին է։ Այլ կերպ՝ միջազգային իրավունքը կարգավորում է ինքնիշխան պետությունների միջև հարաբերությունները, իսկ ներպետական իրավունքը գործում է կոնկրետ պետության ներսում և կարգավորում է անձանց միջև, ինչպես նաև՝ անձանց և հանրային իշխանությունների միջև հարաբերությունները։

Դ. Անցիլոտին, զարգացնելով Հ. Թրիփելի թեզը, ընդգծում է, որ միջազգային և ազգային իրավունքները նաև առանձին իրավակարգեր են²⁹։ Թե՛ Թրիփելի, թե՛ Անցիլոտի դիտարկումները նպատակ չունենին բացարձականացնելու այդ համակարգերի ինքնուրույնությունը և չէին բացառում, ինչպես հեղինակներն են նշում, հատումները³⁰։

Դուալիզմն ընգծում է, որ միջազգային իրավունքն սկզբունքորեն պարունակում է կանոններ դիրքով հավասարների միջև, իսկ ազգային իրավունքին սկզբունքորեն բնորոշ է պետության ինքնիշխանությունն իր քաղաքացիների նկատմամբ, և որ միջազգային իրավունքը ներպետական իրավունքում կարող է գործել միայն միջնորդավորված ձևով՝ պետության կողմից ներպետական իրավական ակտով միջազգային իրավունքի նորմերը ներպետական իրավունքի նորմերի վերածելու միջոցով³¹։

Միջազգային և ազգային իրավունքի համակարգերի հարաբերակցության մասին խոսելիս Հ. Թրիփելն ընդգծում է՝

Որպեսզի միջազգային իրավունքը կարողանա իրականացնել իր առաքելությունը, պետք է մշտապես դիմի ներպետական իրավունքի աջակցությանը։ Առանց ներպետական իրավունքի, այն շատ առումներով անգոր է։ Դա նման է մարշալի, ով հրամաններ է տալիս միայն գեներալներին և կարող է հասնել իր նպատակներին միայն այն դեպքում, եթե վերջիններս, ըստ նրա ցուցումների, նոր հրամաններ տան իրենց ենթականերին³²։

Նշված մոտեցումն ընկած է նաև ժամանակակից միջազգայնագետների տեսակետների հիմքում։ Քանի որ միջազգային իրավունքը կարգավորում է ոչ թե մարդկանց, այլ պետությունների վարքը, այդ իմաստով չի կարող ինքնաբավ համակարգ լինել։ Պետությունները չունեն ոչ հոգի, ոչ սեփական կամքն արտահայտելու ունակություն,

²⁸ Այս մասին տե՛ս Stark's Introduction to International Public Law. 11th ed. London, 1994. P. 64.

²⁹ Анцилотти Д. Курс международного права, Т. I. М., 1961. С. 66.

³⁰ Այս մասին մանրամասն տե՛ս Абдулаев М. И. Примат международного права над внутригосударственным правом: история проблемы и современность (проблемы теории) // Правоведение. 1992. №4. С. 34.

³¹ Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն. Եր, 2020, էջ 125.

³² Հղումը՝ Мюллерсон, Р. А. Նշված աշխ. С. 10.

դրանք «աբստրակտ» միավորներ են և գործում են անձանց միջոցով: Անձինք ազգային իրավական համակարգերի սուբյեկտներ են, որոնք ինքնուրույն կանխորոշում են հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց ձևավորման կարգերը, լիազորությունները և գործունեության մասշտաբը: Այդ պատճառով միջազգային իրավունքը չի կարող գործել առանց ազգային իրավունքի մշտական աջակցության: Կոնկրետ պետության իրավակարգում միջազգային իրավունքի նորմերն անմիջականորեն չեն կարող կիրառվել, սակայն կարող են «տրանսֆորմացվել» ազգային իրավունքի համակարգ: Քանի դեռ այդ «տրանսֆորմացիան» տեղի չի ունեցել, միջազգային չափանիշները կարող են ունենալ ընդամենը «փաստերի» ուժ³³:

Դուալիզմին բնութագրական միջազգային և ազգային համակարգերի առաձին-առաձին գոյություն ունենալու մոտեցումը թույլ է տալիս արձանագրել, որ միջազգային չափանիշները կոնկրետ պետության մակարդակում տրանսֆորմացնելու ու կիրառության ապահովման համար անհրաժեշտ է ներպետական ակտի ընդունում:

Դուալիզմի՝ որպես պետությունների հավաքական կամքն արտահայտող տեսության կոնցեպտուալ թեզն այն է, որ յուրաքանչյուր պետություն պետք է բարեխղճորեն կատարի իր ստանձնած պարտավորությունները: Սակայն պետությունն իրավագոր է ինքնուրույն որոշելու՝ ինչպես իրացնել այդ պարտավորությունները³⁴:

Դուալիզմի տեսությանը զուգահեռ 19-րդ դարի վերջին առաջ եկավ միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության մոնիստական տեսությունը: 1899 թվականին գերմանացի հետազոտող Վ. Կաուֆմանը հրատարակեց «Միջազգային իրավունքի իրավաբանական ուժը և օրենսդիր իշխանության (*Staatesgesetzgebung*) ու պետական մարմինների միջև հարաբերությունները» աշխատությունը: Աշխատությունում Կաուֆմանը շարադրել է մոնիզմի հիմնական թեզերը, որոնք հետագայում զարգացվել են Հ. Կելզենի կողմից³⁵:

Ընդունելով միջազգային իրավունքի պրիմատը՝ Հ. Կելզենը կասկածի տակ է դնում պետական ինքնիշխանությունը: Այս կապակցությամբ տեղին է Գ. Սայդլերի դիտարկումը՝

Միջազգային իրավունքի պրիմատի թեզը բերում է նրան, որ այն ունի առավելություն պետությունների նկատմամբ, որոնք զիջել են իրենց սուվերենությունը հոգուտ իրենցից վերև կանգնած կազմակերպություններին (civita maxima): Նման իրավիճակում պետությունները վեր են ածվում միայն միջազգային կապերի, հարաբերությունների մարմինների³⁶:

³³ Cassese A. International Law in a Divided World. New York, 1994. P. 20.

³⁴ Իրավաբանական գրականության մեջ նշվում է նաև դուալիզմի առանձին հոսանքների մասին: Դրանք են՝ ադիկլալ և չափավոր դուլիստական մոտեցումները: Այս մասին տե՛ս Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն. Եր., 2020, էջ 125-126:

³⁵ Чангли В.С. Формы взаимодействия государственного и международного права: теоретико-правовой анализ/ Вестник Донбасской юридической академии: сборник научных трудов / . – Вып. 19. – Донецк: ДЮА, 2021, С. 111-112.

³⁶ Сайдлер Г. Л. Юридические доктрины империализма. М., 1959. С. 95.

Այս ամենին զուգահեռ նաև պետք է նշել, որ Հ. Կելզենը, լինելով միջազգային իրավունքի պրիմատի ակտիվ կողմնակից, նաև նշում է, որ ոչ բոլոր միջազգային նորմերն են «ամբողջական»: Ինչ-որ առումով կիսելով դուալիստների մոտեցումը՝ նա նշում է, որ միջազգային իրավունքի առանձին նորմեր ամբողջական, ամփոփ չեն (incomplete) և ազգային իրավունքի միջոցով ինպլեմենտացիայի կարիք ունեն³⁷:

Մոնիզմը, ի տարբերություն դուալիզմի, ելնում էր միասնական իրավակարգի դիրքերից: Միջազգային իրավունքը և ազգային իրավակարգն այդ ընդհանուր իրավակարգի առանձին տարրերն են: Այս դեպքում բացակայում է ներպետական իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը միջազգային իրավունքը ներպետական մակարդակում կիրառման ապահովման համար³⁸: Սակայն այս ամենը չի նշանակում, որ այս երկու ենթահամակարգերից մեկը չի կարող առավելություն ունենալ մյուսի նկատմամբ:

Մոնիզմի դասական օրինակ է ՌԴ իրավական համակարգը: ՌԴ Սահմանադրության 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներն ու նորմերը և ՌԴ միջազգային պայմանագրերը ՌԴ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են»³⁹:

Միասնական իրավակարգում, պայմանավորված միջազգային և ազգային իրավունքների զբաղեցրած դիրքերով, մոնիզմը տարբերակում է երկու ուղղություն: Առաջինը, որի կողմնակիցներն անհամեմատ շատ են, ելնում է մեկ ընդհանուր իրավակարգի շրջանակներում միջազգային իրավունքի պրիմատի դիրքերից⁴⁰: Միջազգային իրավունքին հակասող ազգային իրավունքի ցանկացած նորմ ենթակա չէ կիրառման. կիրառվում են միջազգային իրավունքի նորմերը (Նիդերլանդներ, Էստոնիա):

Մյուս խումբ հեղինակները պնդում են ազգային իրավունքի պրիմատը: Այս ուղղությունը հենված է այն մոտեցման վրա, որ միջազգային իրավունքի կիրառությունը կախված է ազգային իրավունքից, որի հիմքում ընկած է պետության բացարձակ ինքնիշխանության ֆենոմենը: Այս իմաստով ՌԴ-ն թերևս պետք է դասել 2-րդ խումբ պետությունների շարքին: ՌԴ ՄԴ-ն նշում է՝

ՌԴ իրավական համակարգում, որը հիմնված է ՌԴ սահմանադրության գերակայության սկզբունքի վրա, եթե միջազգային պայմանագրերը հակասում են Սահմանադրությանը, չեն կարող կիրառվել: Հակառակը կհակասեր ՌԴ սուվերենիտետին և ժողովրդաիշխանությանը, ինչպես նաև Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասի

³⁷ Kelsen H. Principles of International Law. 2nd ed. New York; Chicago; San Francisco; Toronto; London, 1967. P. 553.

³⁸ Международное право = Völkerrecht / Вольфганг Граф Витцтум [и др.]; пер с нем., 2-е изд. / [В. Бергманн, сост.]. – М.: Инфотропик Медиа, 2015. С. 125.

³⁹ Шустров Д. Г. Учение о конституции: учебник: в 2т. Т. 1. М.: Проспект, 2023. С. 373.

⁴⁰ Իրավաբանական գրականության մեջ խոսվում է նաև միջազգային իրավունքի առաջնայնությամբ մոնիզմի այնպիսի ենթատեսակների մասին, ինչպիսիք են ռադիկալ և չափավոր մոնիստական ուղղությունները: Այս մասին տե՛ս նաև Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն. Եր. 2020, էջեր 124-125:

պահանջներին, համաձայն որի՝ օրենքները և այլ իրավական ակտերը, որոնք կիրառվում են ՌԴ տարածքում, չպետք է հակասեն ՌԴ սահմանադրությանը⁴¹:

Պետք է նշել, որ նշված առաջնայնությունը վերաբերում է միայն ՌԴ սահմանադրությանը և չի վերաբերում ՌԴ օրենքներին ու ենթաօրենսդրական ակտերին: Այս կապակցությամբ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 2003 թվականի հոկտեմբերի 10-ի №5 որոշման մեջ նշվում է՝

Միջազգային իրավունքի վերօրենսդրականությունը վերաբերում է բացառապես այն պայմանագրերին, որոնց վերաբերյալ պարտավորությունները ՌԴ-ն ընդունել է Ֆեդերալ օրենքի ձևով (խոսքը, ըստ էության, վավերացված (օրենքով) միջազգային պայմանագրերի մասին է), իսկ այն պայմանագրերը, որոնք ընդունվել են ենթաօրենսդրական ակտերի մակարդակով (խոսքը հաստատվող միջազգային պայմանագրերի մասին է), ապա նման պայմանագրերն ունեն առավելություն միայն ենթաօրենսդրական իրավունքի նկատմամբ:

Ընդհանրացնելով միջազգային և ազգային իրավունքների հարաբերակցության գնահատման մասին դուալիստական և մոնիստական մոտեցումները՝ պետք է արձանագրել, որ դրանք իրենց ենթաուղղություններով այնպիսի խառնաշփոթ են ստեղծում, որ առանձին իրավիճակներում ուղղակի հնարավոր չէ գնահատական տալ այն բանին, թե այս կամ այն պետությունն այդ ո՞ր ուղղության կամ նրա ո՞ր ենթաուղղության չափանիշներով է առաջնորդվում:

3.3. Դուալիզմի և մոնիզմի քննադատություն: Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ այդ մոտեցումներն իրենց կոշտության պատճառով մտնում են իրավունքի իրական վիճակի հետ հակասության մեջ⁴²: Ամեն դեպքում, այս հարցերի հնարավոր լուծումը պետք է փնտրել սահմանադրական կարգավորումներում:

Այս ֆոնի վրա իրավաբանական գրականության մեջ առաջադրվում մեկ այլ, այսպես կոչված միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության գնահատման կոմպրոմիսային ուղղությունը, որն առավել հայտնի է «Ֆիցմորիսի կոմպրոմիս» անվանումով: Պրոֆեսոր Ֆիցմորիսը փորձել է լուծել մոնիստական և դուալիստական մոտեցումների «անհստակությունները»՝ արձանագրելով, որ դրանք արհեստական են, իսկ այդ տեսությունների հեղինակների առաջադրված չափանիշները՝ անորոշ, հիմնված գործնականում անապացուցելի եզրակացությունների, արքիոմանների վրա⁴³: Ուղղության հեղինակը և համակարծիք առաձին խումբ գիտնականներ իրենց

⁴¹ Постановление Конституционного Суда РФ от 9 июля 2012 г. №17-П. Այս մասին տե՛ս Шустров Д. Г. Նշված աշխ. С. 374. ՌԴ սահմանադրության և միջազգային պայմանագրի, այդ թվում՝ դատական և քվադի դատական մարմինների ակտերի միջև հարաբերակցության մասին տե՛ս նաև Постановление Конституционного Суда РФ от 9 апреля 2016 г. №12-П.

⁴² Այս մասին տե՛ս Rousseau, Droit International Public, Bd I, 1970, 44; Brownlie, Principles of Public International Law, 6. Aufl 2003, 33f; Shearer, Starke's International Law, 11. Aufl 1994, 77f.

⁴³ Harris, D. J. Cases and Materials on International Law. 5th ed. London: Sweet&Maxwell, 1998. P. 68 - 71.

մոտեցումներում առավել մեծ ուշադրություն են դարձնում ոչ թե տեսություններին, այլ կոմպրոմիսը փնտրում են պրակտիկ հարթությունում⁴⁴:

Ֆիցմորիսի վերջնականատակը միջազգային և ազգային իրավունքի ներդաշնակումն է: Նա ընդգծում է, որ ազգային իրավունքի մասնագետներն ստեղծում և մեկնաբանում են ազգային իրավունքը՝ հաշվի առնելով իրենց պետության միջազգային պարտավորությունները և միջազգային իրավակիրառ պրակտիկան, իսկ միջազգային իրավունքի մասնագետները մշակում են միջազգային իրավական չափանիշները, ակտերը՝ հաշվի առնելով ազգային իրավունքների առանձնահատկությունները: Այդ պատճառով այս տեսությունը հայտնի է նաև որպես «ներդաշնակման տեսություն»⁴⁵: Հատկանշական է, որ այս ուղղությունն ամրապնդվում է նաև ավելի ժամանակակից տեսակետներով⁴⁶:

3.4. Միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը: «Pacta sunt servanda»: Միջազգային պայմանագրերի, համաձայնությունների կատարման ապահովումը միջազգային իրավունքի հիմնարար ինստիտուտներից է: Այն իրենից ներկայացնում է պարտավորությունների բարեխիղճ կատարման ապահովման գործիքների համակարգ: Միջազգային իրավունքի և ազգային իրավունքի հարաբերակցության և հատկապես միջազգային իրավունքի՝ ազգային իրավունքի համակարգում կիրառման հարցի որոշակիացման տեսանկյունից կարևորվում է հատկապես «pacta sunt servanda» սկզբունքը:

«Pacta sunt servanda» սկզբունքը, որը թարգմանաբար նշանակում է «պայմանագրերը պետք է հարգվեն», ըստ էության, միջազգային պայմանագրերի պարտադիրության, նաև արդյունքում՝ դրանց բարեխիղճ կատարման հավաքական արտահայտությունն է⁴⁷: Սկզբունքն ամրագրում է ստացել ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածում: Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Բոլոր անդամները բարեխիղճորեն կատարում են սույն Կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները, որպեսզի ապահովեն իրենց համար անդամությունից բխող իրավունքներն ու առավելությունները» (*Ընդունված 26.06.1945 թ., ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 02.03.1992*): Սկզբունքն իր էքսպլիցիտ ամրագրումն է ստացել Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայում (*Ընդունված 23.05.1969 թ., ՀՀ համար ուժի մեջ է մտել 16.06.2005*):

⁴⁴ Այս մասին մանրամասն տե՛ս Higgins, R. Problem and Process: International Law and how we use it! Oxford, 1996. P. 205—206; Баархорн, Б. Соотношение международного и внутреннего права в Нидерландах // Белорусский журнал международного права и международных отношений. 1996. № 1. С. 6; Heiskanen, V. The Relation of International and Municipal Law // The Finnish Yearbook of International Law. 1990. Vol. I. P. 160—161. **Барбук А. Соотношение международного и внутригосударственного права: теоретические аспекты / журнал международного права и международных отношений 2005, № 1, С. 5.**

⁴⁵ Harris D.J. Cases and materials on international law. 5-th ed. London: Sweet & Maxwell, 1998. P. 68 - 71.

⁴⁶ Higgins R. Problem and Process: International Law and how we use it! Oxford, 1996. P. 205 - 206. Лысюк С.В. Значение комплексного правового подхода при урегулировании внутригосударственных вооруженных конфликтов // Юридический мир. - М.: Юрист, 2011, № 4 (172). - С. 48-50

⁴⁷ Симонова Н. С. Принцип pacta sunt servanda в механизме обеспечения выполнения обязательств по международным договорам // Сибирский юридический вестник, 2015. N 2 (69). С. 116.

Կոնվենցիայի՝ «Pacta sunt servanda» վերտառությամբ 26-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի»:

«Pacta sunt servanda» սկզբունքի արմատները գալիս են միջնադարի կանոնական իրավունքից⁴⁸: Միջազգային իրավունքում սկզբունքի ժամանակակից ընկալումը կապվում է պայմանագրային պարտավորությունների կատարման պարտադիրության հետ և որևէ կապ չունի միջազգային պայմանագիրն ազգային օրենսդրության մաս համարելու հետ: Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն ընդգծվում է, որ միջազգային պայմանագրերի պարտադիրությունը և, ըստ էության, դրանց իրավաբանական նշանակությունը հիմնված են պետությունների միմյանց իրավասությունների փոխադարձ ճանաչման վրա⁴⁹: Կարծում ենք՝ նույն դատողությունը վերաբերելի պետք է լինի նաև միջազգային կազմակերպությունների (դրա շրջանակներում վավերացված միջազգային պայմանագրերի) և պետությունների միջև միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների փոխադարձ կատարման և հարգման հարցին: Մ.Կապուստինի գնահատմամբ՝ *aequitas* (արդար) տրակտատը պետք է պարտադիր կատարվի: Միջազգային պայմանագրերի կատարման ապահովման լավագույն ձևը դրանց և ազգերի շահերի միջև համաձայնությունն է⁵⁰:

Միջազգային պայմանագրի պարտավորությունների կատարման պարտադիրության գլխավոր պայմանը պետությունների (միջազգային կազմակերպությունների) ձեռք բերված համաձայնությունն է:

Իրավաբանական գրականության մեջ առկա են մոտեցումներ, որոնք «pacta sunt servanda» սկզբունքի էությունը գնահատում են ոչ միայն որպես միջազգային պայմանագրերի տառին, այլև դրա ոգուն համապատասխան գործելու պարտականություն: «Pacta sunt servanda» սկզբունքը պետություններին միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկելու չափանիշ է, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք⁵¹: Առանձին հեղինակներ «pacta sunt servanda»-ն դիտարկում են որպես բնական իրավունքի սկզբունք, որն ունի *jus cogens* բնույթ⁵²:

Եթե փորձենք ամփոփել, ապա «pacta sunt servanda»-ն միջազգային իրավունքի *jus cogens* բնույթի սկզբունք է, որի նպատակը կողմերի պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կատարումն է:

⁴⁸ Полдников Д. Ю. Проблема обязательности договоров: взгляд Саламанской школы XVI века // Право. 2011. № 2. С. 39.

⁴⁹ Мартенс Ф. Ф. Современное международное право цивилизованных народов. В 2 т. М., 2008. Т. 1. С. 299-300.

⁵⁰ Капустин М. Международное право: конспект лекций // Золотой фонд российской науки международного права. Т. 1. М., 2007. С. 176. Печатается по изд. 1873 г. С. 211.

⁵¹ Strupp K. Das Völkerrechtliche Delikt. V. III, part 1a of Handbuch des Völkerrechts, edited by Professor Fritz Stier-Somlo. Berlin, 1920. 223 p. Цит. по: Borchard E. M. Review // The American Journal of International Law. 1921. Vol. 15. N 1. P. 146. 31. Liszt F., Teisen A. The Reconstruction of International Law // University of Pennsylvania Law Review and American Law Register. 1916. Vol. 64, No. 8. P. 767. Симонова Н. С. Նույն աշխ. С. 119.

⁵² Fitzmaurice J. British Year Book of International Law. 1959. P. 195. Հղումը՝ Симонова Н. С. Նույն աշխ. С. 119.

3.5. Պետությունների կողմից միջազգային իրավունքի ադապտացիայի մասին: Վերը նշված տեսությունների, դրանց առանձին ուղղությունների և սկզբունքների վերլուծությունն օբյեկտիվորեն պետք է հնարավորություն ընձեռի սահմանադրական կարգավորումների մակարդակում ճիշտ հասկանալու կոնկրետ պետությունում միջազգային իրավունքի գործողության և (կամ) կիրառման հարցադրումները: Միջազգային կառույցներին ինտեգրվելու տեսանկյունից հարցի հստակեցումը գտնվում է նաև քաղաքական նպատակահարմարության հարթությունում: Առանձին պետություններում, օրինակ, միջազգային իրավունքի պրիմատի ճանաչման անհրաժեշտությունը դատարանների կողմից միջազգային իրավունքի կիրառման համար բաց լինելն ուղղակի թելադրված է պետության և միջազգային կառույցների կապերի մասշտաբով⁵³:

Միջազգային իրավունքի ազգային իրավունքի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից կարևոր է այն, թե ինչ մեխանիզմների միջոցով է միջազգային իրավունքը ներթափանցում ազգային համակարգ: Այդ մեխանիզմներից է տրանսֆորմացիան, որը հիմնված է արդեն քննարկված դուալիստական պատկերացումների վրա: Տրանսֆորմացիայի արդյունքն ազգային իրավունքի նորմն է⁵⁴: Այստեղ խոսքը ոչ թե վավերացնող օրենքի մասին է, ինչպես օրինակ՝ ՀՀ-ում, այլ նոր նորմի ստեղծման մասին: Այս դեպքում ունենում ենք նորմի բովանդակության կրկնություն իրավունքի տարբեր աղբյուրներում⁵⁵: Ներթափանցումն ապահովող մյուս մեխանիզմն ինկորպորացիան է, որը հայտնի է նաև ադապտացիա, կլանում, ռեցեպցիա անվանումներով: Նման պահանջը կարող է բխել սահմանադրական ընդհանուր կարգավորումներից կամ իրականացվել սահմանադրական իրավունքի հիման վրա առանձին ակտի ընդունման միջոցով: Ի տարբերություն տրանսֆորմացիայի՝ այս դեպքում ինկորպորացված իրավունքը պահպանում է իր միջազգային իրավական բնույթը:

Եվ վերջապես երորդդ մեխանիզմն այսպես կոչված միջազգային իրավունքը կիրառման բերելու տեսությունն է, որ քիչ է կապված մոնիստական և դուալիստական պատկերացումների հետ: Այս դեպքում միակ միջոցը ներպետական իրավանորմի առկայությունն է, որն ապահովելու է միջազգային իրավունքի կիրառությունն ազգային մակարդակում: Ի տարբերություն տրանսֆորմացիայի՝ նոր նորմ չի ստեղծվում և ի տարբերություն ինկորպորացիայի՝ ներպետական իրավական ակտը չի ապահովում միջազգային իրավունքի անմիջական գործողություն, այլ ընդամենը կիրառվում է ներպետական մակարդակում⁵⁶, որն առավել մոտ է ՀՀ-ում առկա կարգավորումներին:

⁵³ Барбук А. Соотношение международного и внутригосударственного права: теоретические аспекты // журнал международного права и международных отношений, 2005. № 1, С. 6-7.

⁵⁴ Международное право = Völkerrecht / Вольфганг Граф Витцтум [и др.]; пер с нем., 2-е изд. / [В. Бергманн, сост.]. – М.: Инфотропик Медиа, 2015. С. 128.

⁵⁵ Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն. Եր, 2020, էջ 129:

⁵⁶ Международное право = Völkerrecht / Вольфганг Граф Витцтум [и др.]; пер с нем., 2-е изд. / [В. Бергманн, сост.]. – М.: Инфотропик Медиа, 2015. С. 129.

3.6. ՀՀ վավերացված միջազգային իրավունքը ՀՀ սահմանադրական կարգավորումների լույսի ներքո: ՀՀ Սահմանադրության «Իրավական նորմերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ՀՀ իրավակարգում ՀՀ սահմանադրության գերակայությունը՝ գործողության առաջնայնությունը⁵⁷ ենթասահմանադրական իրավունքի նկատմամբ: Հոդվածի 2-րդ մասը կոլիզիոն կանոնի միջոցով սահմանում է համապատասխանաբար սահմանադրական օրենքների և օրենքների գործողության առաջնայնությունը ենթաօրենսդրական իրավունքի նկատմամբ:

Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի գործառույթից (գործողության առաջնայնություն) պետք է տարբերել իրավական նորմերի *կիրառման առաջնայնությունը, որի պարագայում կարևորվում է ոչ թե գերակայության գործոնը, այլ այն, թե ինչ հերթականությամբ պետք է կիրառվեն իրավական նորմերը*: Կիրառման առաջնայնության դեպքում կիրառվում է առավել ցածր աստիճանի վրա գտնվող իրավանորմը, որը բխում է առավել կոնկրետ և մանրամասն ձևակերպված օրենքի պարտադիրությունից⁵⁸: Դրա համար սահմանադրական հիմք է 6-րդ հոդվածի 1-ին մասը, ինչը կխախտվի, եթե կիրառվեն առավել ընդհանուր բնույթի իրավակարգավորումները⁵⁹: Իհարկե, կիրառման առաջնայնության մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ կիրառման առաջնայնությամբ օժտված ցածր աստիճանի վրա գտնվող և գործողության առաջնայնություն ունեցող նորմերի միջև բացակայում է կոնֆլիկտը: Նման կոնֆլիկտի առկայության դեպքում հարցը կարող է լուծում ստանալ սահմանադրական կամ վարչական արդարադատության շրջանակներում, ինչը քննարկման այլ հարց է:

Եթե ազգային իրավունքի մակարդակում անհրաժեշտաբար դիտարկվում են իրավական նորմերի և՛ գործողության, և՛ կիրառման առաջնայնության հարցերը, ապա այլ է խնդիրն ազգային իրավունքի և միջազգային իրավունքի հարաբերակցության հարցում:

ՀՀ-ում առկա իրավիճակին անդրադառնալիս անհրաժեշտ է նշել, որ ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում *կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը*: Հատկանշական է, որ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի կիրառման առաջնայնությանը վերաբերող նորմը ՀՀ սահմանադրության «Իրավական նորմերի աստիճանակարգությունը» 5-րդ հոդվածում նախատեսելը պայմանավորված է վերջինիս կոլիզիոն նորմ լինելու հանգամանքով:

⁵⁷ Այս մասին տե՛ս Պողոսյան Վ. Սարգսյան Ն., Սահմանադրության անմիջական գործողությունը և նորմերի կիրառման աստիճանակարգությունը Սահմանադրության գերակայության համատեքստում (մաս 2) // Պետություն և իրավունք, 2020, N 2 (87), էջ 8:

⁵⁸ Պողոսյան Վ. Սարգսյան Ն., տես նույն տեղում՝ էջ՝ 9-10:

⁵⁹ Այս մասին տե՛ս Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն. Եր, 2020, էջ 136:

ՀՀ սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԺ-ն վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում միջազգային պայմանագրերը (...): Ընդ որում՝ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԱԺ-ն, Կառավարության առաջարկությամբ, միջազգային պայմանագրերը վավերացնում, կասեցնում և չեղյալ է հայտարարում օրենքով՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ⁶⁰:

Ինչպես արդեն նշվել է, ազգային իրավունքում *կիրառման առաջնայնությունը* հնարավոր է միայն այն դեպքում, երբ կարգավորումը մանրամասնող առավել ցածր իրավաբանական ուժ ունեցող և առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի միջև բացակայում է կոլիզիան, իսկ միջազգային նորմերի *կիրառման առաջնայնությունը* հնարավոր է կոլիզիայի պարագայում (ՀՀ սահմանադրություն, հոդված 5, մաս 3):

Միջազգային իրավունքի առաջնայնությունը կապելով դրա կիրառման, այլ ոչ թե գործողության առաջնայնության հետ՝ պետք է արձանագրել, որ միջազգային իրավունքի և ազգային իրավունքի կոնֆլիկտը ներպետական իրավունքի անվավերությունը չէ⁶¹: Նման իրավիճակներում իրավակիրառն ընդամենը կիրառում է կիրառման առաջնայնություն ունեցող նորմը, որը միջազգային իրավունքի նորմն է և այն միջազգային պայմանագրին չի դարձնում ազգային օրենսդրության բաղկացուցիչ մաս: Միջազգային իրավունքի նորմի կիրառումն առաջնայնության կարգով պետության կողմից իր ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման ապահովումն է, որը բխում է «pacta sunt servanda» սկզբունքի էությունից⁶²:

Միջազգային իրավունքի կիրառման առաջնայնությունն ազգային նկատմամբ չի հանգեցնում ազգային իրավունքի անվավերության, քանի որ այս սկզբունքը վերաբերում է միայն դրա կիրառման, օգտագործման կարգին, այլ ոչ թե ազգային իրավունքի իրավական ուժի հարցին: Սա նշանակում է, որ ազգային իրավունքը մնում է վավեր, բայց միջազգային նորմի հետ բախվելիս, ինչպես նշված է նաև ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում, առաջնահերթությունը կտրվի ՀՀ վավերացված միջազգային իրավունքին:

Եկեք վերլուծենք, թե ինչու է դա այդպես:

⁶⁰ Սովորական օրենքները, ՀՀ սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Հոդվածի 2-րդ մասը թվարկում է սահմանադրական օրենքները, որոնք ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Եթե հաշվի առնենք, որ միջազգային պայմանագիրը վավերացնող օրենքն ընդունվում է ձայների ավելի մեծ քանակությամբ, քան սովորական օրենքը և ավելի քիչ քանակությամբ, քան սահմանադրական օրենքը, հարց է առաջանում, երբ ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը, նկատի է ունեցել միայն սովորական, թե՛ նաև սահմանադրական օրենքները: Հարցի պատասխանը ՀՀ սահմանադրության մեջ առնվազն անորոշ է:

⁶¹ Այս մասին տե՛ս Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն. Եր, 2020 էջեր 145-146:

⁶² Այս մասին մանրամասն տե՛ս Права человека: международное право и национальное законодательство / под ред. проф. В.В. Филипова. Вильнюс, 2011. С.69-70.

1. *Ներքին իրավակարգի, իրավական անվտանգության պահպանում:* Միջազգային իրավունքի նորմի կիրառությունը չի վերացնում ազգային իրավունքի նորմը, այլ միայն ժամանակավորապես «ճնշում» է դրա գործողությունը կոնկրետ իրավիճակում: Սա թույլ է տալիս պահպանել պետության ներքին իրավակարգը: Հակառակ դեպքում՝ յուրաքանչյուր կոնֆլիկտի դեպքում ազգային նորմերի վերացումը կհանգեցներ անկայունության և կառավարման հարցում բարդությունների: Միջազգային նորմերի կիրառման պայմանով ազգային նորմերի անվավերության բացառումն ապահովում է իրավական կարգավորման կայունությունն ու կանխատեսելիություն:

2. *Ստանձնած միջազգային պարտավորությունների և պետության ինքնիշխանության միջև հավասարակշռության ապահովում:* Պետությունը, վավերացնելով միջազգային պայմանագրերը, ճանաչում է դրանց կիրառելիությունը, սակայն իրեն իրավունք է վերապահում ներքին հարցերը կարգավորել ազգային իրավունքի մակարդակով: ՀՀ սահմանադրական գործող կարգավորումների պայմաններում միջազգային իրավունքն ի վիճակի է միայն «արգելափակել» հակասող ազգային նորմի գործողությունը, բայց չվերացնել այն: Նման մոտեցումը պահպանում է հավասարակշռությունը միջազգային հանրության առջև ստանձնած պարտավորությունների և պետության ինքնիշխանության միջև: Կարելի է արձանագրել, որ այս գաղափարն էական է նաև «Ֆիցմորիսի կոմպրոմիսի» տեսության դեպքում:

3. *Այն կիրառման առաջնայնության, ոչ թե չեղարկման հայեցակարգ է:* Կիրառման առաջնայնությունը ենթադրում է, որ միջազգային նորմն առաջնային է միայն ազգային իրավունքի հետ հակասության դեպքում, ինչը բխում է նաև ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից: Այսպիսով՝ կիրառման առաջնայնության սկզբունքը չի դնում ազգային նորմը վերացնելու խնդիր, այլ այն կոնկրետ դեպքի համար ժամանակավորապես ոչ պիտանի է դարձնում:

Միջազգային իրավունքի կիրառման առաջնայնությունն ապահովում է պետության միջազգային պարտավորությունների կատարումը՝ չխաթարելով ազգային իրավունքի իրավական ուժը, ինչը թույլ է տալիս ներդաշնակորեն գոյակցել երկու իրավական համակարգերը:

Այսպիսով՝ եթե խոսում ենք իրավանորմերի գործողության առաջնայնության մասին (առնվազն, ՀՀ սահմանադրության կարգավորումների լույսի ներքո միջազգային իրավունքի նորմերին վերաբերելի չէ), ապա դրա արդյունքը պետք է լինի հակասող, ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտի անվավերությունը, իսկ եթե խոսում ենք կոնկրետ դեպքում միջազգային իրավունքի նորմի կիրառման առաջնայնության մասին, ապա ակտերի միջև հակասության դեպքում իրավակիրառ պետք է ընդամենը կիրառի միջազգային իրավունքի նորմը՝ որևէ կերպ այն չկապելով հակասող նորմի անվավերության կամ, առհասարակ, նման գործընթացի անհրաժեշտության հետ:

4. ՀՀ վարչական դատարանի՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասության օրինաչափությունը

4.1 Ընդհանուր դրույթներ: Ինչպես արդեն նշվեց սույն հետազոտության առաջին բաժնում, ենթաօրենսդրական ակտերի ուղիղ հակասությունը միջազգային պայմանագրերին, որպես կանոն, ոչ կենսունակ է, քանի որ քիչ հավանական է, որ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտն անմիջապես (ուղիղ) հակասի միջազգային պայմանագրին՝ չհակասելով օրենքին: Եթե ենթաօրենսդրական ակտն ընդունվել է օրենքով նախատեսված դեպքում կամ ի կատարումն օրենքի, ապա տվյալ դեպքում կոնվենցիային կարող է հակասել օրենքը և դրա վրա հիմնված ենթաօրենսդրական ակտը, իսկ ենթաօրենսդրական ակտը, **որպես կանոն**, ուղիղ չի կարող հակասել կոնվենցիային:

Սույն աշխատանքում «որպես կանոն» եզրույթի կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարող են լինել միջազգային պայմանագրերի տեսակներ, որոնք բովանդակային իմաստով օրենք են, սակայն ունեն միջազգային պայմանագրի ձև, որին կանոնադառնանք հաջորդիվ:

4.1.1 Sui generis միջազգային պայմանագրերը օրենք, թե՞ նորմատիվ պայմանագիր: Ինչպես նշեցինք, կարող են լինել միջազգային պայմանագրերի տեսակներ, որոնք բովանդակային իմաստով օրենք են, սակայն ունեն միջազգային պայմանագրի ձև, այլ կերպ ասած՝ միջազգային պայմանագրի ձև ունեցող բովանդակությամբ օրենք:

Այսպես, Սահմանադրական դատարանի՝ 10.10.2017 թ. ՄԴՈ-1381 որոշմամբ արտահայտվել է դիրքորոշում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրի՝ որպես իրավական ակտի բնույթի վերաբերյալ, առ այն, որ տվյալ ակտը, ըստ էության, դասվում է *վերազգային* իրավունքի աղբյուրների շարքին: Դասական իմաստով միջազգային իրավունքի և վերազգային իրավունքի տարբերությունը հիմնականում այն է, որ վերջինիս նորմերով կարգավորում են ոչ միայն պետությունների միջև (**հորիզոնական**), այլ նաև պետության ներսում գործող (**ուղղահայաց**) հարաբերություններ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հորիզոնական իրավահարաբերություններ կարգավորող և պետության համար պարտավորություններ սահմանող նորմերը: Իսկ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող, բովանդակային առումով «օրենք» կատեգորիային համապատասխանող և ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմերը կարող են ՀՀ սահմանադրական դատարանում սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսանալ «հետագա սահմանադրական վերահսկողության» կարգով՝ հաշվի առնելով նաև դրանում ամրագրված որևէ դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերը նշված դիրքորոշման համատեքստում գործնականում հնարավոր է, որ ենթաօրենսդրական ակտն ուղիղ հակասի միջազգային պայմանագրին, այս դեպքում՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրի դրույթներին: Սակայն հարկ է նկատել, որ համանման վիճակներում գործ ունենք ոչ թե դասական իմաստով միջազգային պայմանագրի, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հորիզոնական իրավահարաբերություններ կարգավորող և պետության համար պարտավորություններ սահմանող նորմերն ամրագրող նորմատիվ պայմանագրի, այլ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող, բովանդակային առումով «օրենք» կատեգորիային համապատասխանող և ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմեր բովանդակող ակտի հետ:

4.1.2 Վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանին անուղղակիորեն նոր իրավասության վերապահումը: Վճռաբեկ դատարանն իր՝ ՎԴ/9227/05/23 վարչական գործով 25.09.2024թ. որոշմամբ կարծես թե «լրացում» է կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում՝ սահմանելով նորմատիվ իրավական ակտերի նոր աստիճանակարգություն՝ միջազգային պայմանագիրը հավասարեցնելով ազգային օրենքներին, ըստ այդմ՝ արձանագրել, որ ներպետական օրենսդրության աստիճանակարգությունում միջազգային պայմանագիրը հաջորդում է ՀՀ Սահմանադրությանը:

Այս համատեքստում, Վճռաբեկ դատարանը նաև անուղղակիորեն նոր իրավասություն է վերապահել վարչական դատարանին՝ հայտնելով դիրքորոշում առ այն, որ ՀՀ վարչական դատարանը պարտավոր է *inter alia* ստուգել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի)՝ Կոնվենցիային (միջազգային պայմանագրին՝ ըստ հեղինակի) համապատասխանելու հանգամանքը:

Հարկ է նաև ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի 26.03.2024 թ. վճռում⁶³ նշել է, որ թեև Վարչական վերաքննիչ դատարանի այն եզրակացությունը, որ Կառավարության որոշումների ենթադրյալ հակասահմանադրականությունը վարչական դատարանների իրավասության շրջանակներում չէ, կարծես թե համապատասխանում է ՎԴՕ-ի 135-րդ հոդվածի 2-րդ կետին, պարզ չէ, թե ինչ հիմքերով է դատարանը հրաժարվել քննելու Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների վիճարկվող Որոշման ենթադրյալ անհամապատասխանությունը՝ հաշվի առնելով, որ այն ժամանակ գործող խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմել և գերակա էին դրանց չհամապատասխանող ներպետական իրավական դրույթների նկատմամբ: Սույն հաստատված նախադեպային իրավունքի լույսի ներքո Դատարանը եզրահանգում է, որ վարչական դատարանների՝ դիմումատուի բողոքն ըստ էության քննելու մերժումը խախտում է նրա՝ դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը վիճարկելու համար Կառավարության կողմից ընդունված նորմատիվ ակտը, որը ենթադրաբար խախտել է նրա գույքային իրավունքները:

⁶³ Տես՝ Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ վճիռ (զանգատ թիվ 16480/13), 25-26-րդ կետեր:

Կառավարության «ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» 18.11.2004 թ. N 1555-Ն որոշումը (այսուհետ՝ Կառավարության որոշում), որի վերաբերյալ դիրքորոշում է ներկայացրել ՄԻԵԴ-ը, ունի «Ն» (նորմատիվ) տառով նշում, սակայն տվյալ որոշման ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ Կառավարության որոշման տվյալ գործին վերաբերելի 1-ին կետը պարունակում է անհատական կարգադրագիր, այսինքն՝ այն ունի ակնհայտ անհատական և ոչ նորմատիվ բնույթ, իսկ իրավական ակտում դրա բնույթի մասին նշված լինելը կամ նորմատիվ իրավական ակտի ընդունման ու ուժի մեջ մտնելու ընթացակարգով ընդունված և ուժի մեջ մտած լինելը որոշիչ չեն տվյալ իրավական ակտում ամրագրված իրավական կարգավորումը նորմատիվ կարգավորում որակելու համար:

Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/0518/05/19 գործով 13.01.2022 թ. որոշմամբ արձանագրել է. «Նորմատիվ իրավական ակտերն այլ իրավական ակտերից տարբերվում են ինչպես բովանդակային, այնպես էլ ձևական չափանիշներով, որոնց շրջանակում առաջնային է բովանդակային չափանիշը: Ըստ այդմ՝ այս կամ այն իրավական ակտում դրա բնույթի մասին «Ն» (նորմատիվ) տառով նշումը և/կամ նորմատիվ իրավական ակտի ընդունման ու ուժի մեջ մտնելու ընթացակարգով ընդունված և ուժի մեջ մտած լինելը դեռևս որոշիչ չեն տվյալ իրավական ակտը նորմատիվ իրավական ակտ որակելու համար: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտի նորմատիվ բնույթը պարզելու նպատակով անհրաժեշտ է տվյալ իրավական ակտը ենթարկել բովանդակային վերլուծության»:

Անշուշտ, ՄԻԵԴ-ի դիրքորոշման հետ պետք է համաձայնել այն համատեքստում, որ անձը պետք է դատական պաշտպանության իր իրավունքն իրացնելու իրավական հնարավորություն ունենա, և այն չպետք է ներպետական իրավական դրույթների սխալ մեկնաբանման կամ կիրառման արդյունքում սահմանափակել: Նշված գործի փաստական հանգամանքներից պարզ է դառնում, որ դիմումատուի բողոքը մերժվել է, քանի որ դիմումատուն չի կատարել ՎԴՕ-ի 135-րդ հոդվածով սահմանված հիմնական պահանջը, քանի որ այն չի նշել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ, որի հետ վիճարկվող Որոշումը ենթադրաբար անհամատեղելի է: Քանի որ դիմումատուն հղում է կատարել Սահմանադրությանը և Կոնվենցիային, Վերաքննիչ դատարանը նշել է, որ կառավարության որոշումների սահմանադրականության վերաբերյալ վեճերը պատկանում են Սահմանադրական դատարանի իրավասությանը, մինչ ՎԴՕ-ի 135-րդ հոդվածը վերաբերում է միայն ներպետական իրավունքին և ոչ միջազգային պայմանագրերին՝ ներառյալ Կոնվենցիան:

Ինչպես բխում է վերոշարադրյալից՝ ՄԻԵԴ-ի դիրքորոշումը վերաբերում է անձի դատական պաշտպանության իրավունքի իրացմանը, և վերջինս նեղ մասնագիտական հարցեր քննարկման առարկա չի դարձրել, ուստի և նշվածով չի կարող հիմնավորվել Վճռաբեկ դատարանի քննարկվող որոշմամբ վարչական դատարանին նոր «լիա-

գործության» վերապահումը և իրավական ակտերի աստիճանակարգությունում միջազգային պայմանագրերի ներառման դիրքորոշումը:

Այսպիսով՝ անձը պետք է իրական հնարավորություն ունենա իր դատական պաշտպանության իրավունքի իրացման, և եթե ՀՀ վարչական դատարաններում ՀՀ վարչ. դատ. օր-ի 26-րդ գլխով սահմանված կարգով վիճարկվում է «Ն» նշումով իրավական ակտը, որն իրականում անհատական է, ապա այս դեպքում անձին դատական պաշտպանության իրավունքից չզրկելու համար հայցի (դիմումի) ընդունումը ոչ թե պետք է մերժել՝ վեճը ՀՀ վարչական դատարանին ենթակա չլինելու հիմքով, այլ դիմումը պետք է վերադարձնել՝ վարչական (անհատական) ակտերի վիճարկման ընդհանուր կարգով ներկայացնելու համար, ինչը և կիրառելի կլինե՞ր նաև վերոնշյալ գործի շրջանակներում ներկայացված դիմումի դեպքում:

4.3 Իրավահամեմատական տեսանկյունը:

Իրավահամեմատական հետազոտությունների արդյունքում հնարավոր է առանձնացնել մի քանի խումբ երկրներ, որոնց օրենսդրությամբ խնդրո առարկա հարցի վերաբերյալ սահմանված են տարբեր կարգավորումներ:

Որոշ երկրների իրավական համակարգերում սահմանված են օրենքների և ենթօրենսդրական ակտերի՝ սահմանադրությանը և միջազգային նորմերին կամ պայմանագրերին հակասելու հիմքով գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարանի դիմելու պրակտիկան:

Այսպես, Լատվիայի «Վարչական դատավարության մասին» 25.11.2001 թ. օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտի կամ փաստացի գործողության իրավաչափությունն ստուգելիս կասկածի դեպքում դատարանն ստուգում է՝ արդյո՞ք համապատասխանում է կիրառված իրավական նորմն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական նորմին:⁶⁴

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե դատարանը եզրահանգում է, որ իրավունքի նորմը չի համապատասխանում Լատվիայի Սահմանադրությանը կամ միջազգային իրավունքի նորմին (ակտին), ապա դատարանը կասեցնում է գործով դատավարությունը և պատճառաբանված դիմում է Լատվիայի Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դատարանը վերսկսում է գործով դատավարությունը և հետագա դատավարությունում հիմնվում է Սահմանադրական դատարանի դիրքորոշման վրա:

Մինևույն ժամանակ, Լատվիայի «Սահմանադրական դատարանի մասին» 14.06.1996 թ. օրենքի 17-րդ հոդվածի 1-ի մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ Լատվիայի Սահմանադրական դատարան կարող են դիմել... Լատվիայի ներպետական օրենսդրության միջազգային պայմանագրերին համապատասխանության դիմումով նաև քրեական, քաղաքացիական և վարչական գործեր քննող դատարանները:

⁶⁴ Stu՝ <https://lawyer-khroulev.com/wp-content/uploads/2022/06/Administrativno-Processualnij-Zakon-Latvii-2017.pdf>

Համանման իրավակարգավորում է նաև Սլովակիայի սահմանված օրենսդրությամբ, մասնավորապես, Սլովակիայի Սահմանադրության 160-րդ հոդվածի համաձայն՝ Սլովակիայի Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում օրենքների՝ սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի՝ միջազգային պայմանագրերին և միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխանության վերաբերյալ (...)⁶⁵:

Դրան գուցահեռ՝ Սլովակիայի քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրությամբ ամրագրված է դատարանների գործով դատաքննությունը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, եթե դատարանը եզրահանգում է, որ նորմատիվ իրավական ակտը, (նույնիսկ ամենացածր իրավաբանական ուժ ունեցող), հակասում է Սահմանադրությանը, օրենսդրությանը կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական նորմերին, ինչպես նաև միջազգային պայմանագրերին⁶⁶:

Մեկ այլ խումբ երկրների իրավական համակարգերում սահմանված են օրենքների և ենթաօրենսդրական ակտերի՝ սահմանադրությանը, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերի՝ օրենքներին հակասելու հիմքով գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու պրակտիկան, իսկ միջազգային պայմանագրերի մասով որևէ կարգավորում սահմանված չէ, օրինակ՝ Լիտվիա⁶⁷, Խորվաթիա⁶⁸:

Երրորդ խումբ երկրների իրավական համակարգերում սահմանված են օրենքների և ենթաօրենսդրական ակտերի՝ սահմանադրությանը հակասելու հիմքով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու պրակտիկան, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերի՝ օրենքներին հակասելու հիմքով վարչական արդարադատության իրականացման կարգավորումները, իսկ միջազգային պայմանագրերի մասով կրկին որևէ կարգավորում սահմանված չէ, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն⁶⁹, Դրդստան⁷⁰, Ղազախստան⁷¹, Մոլդովա⁷²:

Այլ կերպ ասած՝ միասնական կարգավորում արտասահմանյան երկրներում

⁶⁵ Տե՛ս <https://www.us-rs.si/en/legal-basis/constitution>:

⁶⁶ Տե՛ս Соловьев А.А. Правовое регулирование судебного нормоконтроля.опыт зарубежных государств. М.: Изд. ИНФРА-М, 2019. С. 74.

⁶⁷ Տե՛ս Լիտվիայի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, 19.09.2000 թ., <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.162936?jfwid=>

⁶⁸ Տե՛ս Խորվաթիայի Հանրապետության «Սահմանադրական դատարանի մասին» 03.05.2002 թ. օրենքը, https://www.usud.hr/sites/default/files/dokumenti/The_Constitutional_Act_on_the_Constitutional_Court_of_the_Republic_of_Croatia_consolidated_text_Official_Gazette_No_49-02.pdf

⁶⁹ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգիրքը, 08.03.2015թ., https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/376390c2e0b4d19fbd9ad25590e17fce8a5c2671/

⁷⁰ Տե՛ս Դրդստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, 25.01.2017թ., <https://cbd.minjust.gov.kg/3-28/edition/1265033/ru>

⁷¹ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, 20.06.2020թ., <https://adilet.zan.kz/rus/docs/K2000000350>

⁷² Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, 19.07.2017թ., https://www.legis.md/cautare/getResults?doc_id=146158&lang=ru#

սահմանված չէ, սակայն այն երկրներում, որոնցում հստակ կարգավորված է նաև միջազգային պայմանագրերին հակասության վերաբերյալ դրույթ, այս խնդրի լուծումը, որպես կանոն, սահմանադրական արդարադատության տիրույթում է, այլ ոչ թե վարչական արդարադատության:

4.3 Եզրահանգումներ: Այսպիսով՝ հարկ է ընդգծել, որ Վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանին՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասություն վերապահելով՝ վարչական դատարանին անուղղակիորեն նաև վերապահում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի լուծումը: Դիցուք, պատկերացնենք մի իրավիճակ, երբ վարչական դատարանը *inter alia* ստուգել է վիճարկվող ենթաօրենսդրական ակտի (կամ դրա դրույթի)՝ միջազգային պայմանագրին, կոնկրետ դեպքում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային համապատասխանելու հանգամանքը, ընդ որում՝ կոնվենցիայի այն դրույթին, որն ամբողջությամբ արտացոլված է ՀՀ Սահմանադրությունում: Տվյալ դեպքում ստացվում է, որ վարչական դատարանն անուղղակիորեն լուծեց ենթաօրենսդրական ակտի (կամ դրա դրույթի) նաև սահմանադրությանը համապատասխանության հարցը, ինչի իրավասությունը վերապահված է Սահմանադրական դատարանին:

Ուստի, Վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանին՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասություն վերապահելով՝ այն ենթադրում է նաև շրջանցել սահմանադրական արդարադատությունը, այդ դեպքում վերը նշված իրավասության վերապահումը չի կարող համարվել իրավաչափ՝ վարչական արդարադատության և սահմանադրական արդարադատության իրականացման համատեքստում: Այս տեսանկյունից նաև պատահական չէ, որ այն երկրներում, որոնցում հատուկ ընդգծված է նաև միջազգային պայմանագրերին հակասության վերաբերյալ դրույթ, այդ հակասության հարցի լուծման լիազորությունը վերապահված է սահմանադրական դատարանին, այլ ոչ թե վարչական դատարանին:

Ուստի այս համատեքստում հարկ է նշել, որ վերը նշված իրավիճակում վարչական դատարանը ոչ թե պետք է շրջանցի սահմանադրական արդարադատությունը և **ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչի, այլ «Pacta sunt servanda» սկզբունքն ապահովի՝ անմիջապես կիրառելով միջազգային պայմանագրի դրույթը:**

Ինչ վերաբերում է ՄԻԵԴ-ի որոշման, ապա ինչպես հիմնավորվեց նախորդիվ, ՄԻԵԴ-ի դիրքորոշումը վերաբերում է անձի դատական պաշտպանության իրավունքի իրացմանը, և այդ դիրքորոշմամբ չի կարող հիմնավորվել Վճռաբեկ դատարանի քննարկվող որոշմամբ վարչական դատարանին նոր «լիազորության» վերապահումը և իրավական ակտերի աստիճանակարգությունում միջազգային պայմանագրերի ներառման եզրահանգումը:

5. Ամփոփում

1. ՀՀ վճռաբեկ դատարանի *ex nihilo* դիրքորոշումն ունակ չէ խարխալելու իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգում նորմատիվ իրավական ակտի և նորմատիվ պայմանագրի՝ որպես իրավունքի առանձին աղբյուրների մասին ճանաչում ստացած մոտեցումը: Միջազգային պայմանագիրը որակելով որպես օրենսդրության մաս, առանց որևէ իրավաչափ նպատակի՝ Վճռաբեկ դատարանը հակադրվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ օրենսդրության և օրենսդրական ակտերի բնորոշումներին, որի արդյունքում «վերակենդանացրել է» մի քանի տասնամյակ առաջ իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգում առկա խառնաշփոթը: ՀՀ վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը չի կարող հիմք ծառայել նշելու, որ իրավական նորմերի աստիճանակարգության մեջ միջազգային պայմանագիրը հաջորդում է Սահմանադրությանը:

2. Միջազգային իրավունքի կիրառման առաջնայնությունն ազգային նկատմամբ չի հանգեցնում ազգային իրավունքի անվավերության, քանի որ այս սկզբունքը վերաբերում է միայն դրա կիրառման կարգին, այլ ոչ թե ազգային իրավունքի իրավական ուժի հարցին: Սա նշանակում է, որ ազգային իրավունքը մնում է վավեր, բայց միջազգային նորմի հետ բախվելիս, ինչպես նշված է նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում, առաջնայնությունը կտրվի ՀՀ վավերացված միջազգային իրավունքին: Օրենսդիրը վարչական դատարանին ընդդատյա՝ նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերի շարքում, ըստ էության, չի ներառել ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերին դրանց համապատասխանության հարցը որոշելու հնարավորությունը՝ կարևորելով վավերացված միջազգային պայմանագրի կիրառման առաջնայնությունը:

3. Վճռաբեկ դատարանը փորձել է լուծել տևական ժամանակ դոկտրինում լուծում չգտած՝ միջազգային պայմանագրի և Սահմանադրության կոլիզիոն նախապատվության հարցը և, առանց որևէ հիմնավորման, պարզապես հայտարարել է որ միջազգային պայմանագիրը ներպետական օրենսդրության աստիճանակարգությունում հաջորդում է ՀՀ Սահմանադրությանը:

4. «Հորինել է» ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու Վարչական դատարանի իրավասությունը, որը՝ որպես գաղափար, «չծնված»՝ արդեն իսկ մահացած է, քանի որ նախ՝ գործնականում քիչ հավանական է մի իրավիճակ, երբ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտն ուղիղ կհակասի միջազգային պայմանագրին՝ չհակասելով օրենքին:

Երկրորդ՝ Վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանին՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասություն վերապահելով՝ վարչական դատարանին անուղղակիորեն նաև վերապահում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի լուծումը՝ շրջանցելով սահմանադրական արդարադատությունը:

Երրորդ՝ միջազգային փորձը ցույց է տվել, որ այն երկրներում, որոնցում հատուկ

ընդգծված է նաև միջազգային պայմանագրերին հակասության վերաբերյալ դրույթ, այդ հակասության հարցի լուծման լիազորությունը վերապահված է սահմանադրական դատարանին, այլ ոչ թե վարչական դատարանին:

5. Վարչական դատարանը ոչ թե պետք է շրջանցի սահմանադրական արդարադատությունը և ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչի, այլ «*Pacta sunt servanda*» սկզբունքն ապահովի՝ անմիջապես կիրառելով միջազգային պայմանագրի դրույթը:

6. Անձը պետք է ունենա իր դատական պաշտպանության իրավունքի իրացման իրական հնարավորություն, և եթե ՀՀ վարչական դատարաններում ՀՀ վարչ. դատ. օր-ի 26-րդ գլխով սահմանված կարգով վիճարկվում է «Ն» նշումով իրավական ակտ, որն իրականում անհատական է, ապա այս դեպքում անձին դատական պաշտպանության իրավունքից չզրկելու համար հայցի (դիմումի) ընդունումը ոչ թե պետք է մերժել՝ վեճը ՀՀ վարչական դատարանին ենթակա չլինելու հիմքով, այլ դիմումը պետք է վերադարձնել՝ վարչական (անհատական) ակտերի վիճարկման ընդհանուր կարգով ներկայացնելու համար:

7. ՀՀ վճռաբեկ դատարանի քննարկված դիրքորոշումը չպետք է համարվի բուհում դասավանդվող նյութը վերափոխելու առիթ. այն չի կարող օգտագործվել իրավունքի տեսության և իրավունքի այլ ճյուղերի դասընթացների շրջանակում իրավունքի աղբյուրների համակարգը և օրենսդրության համակարգը վերանայելու և միջազգային պայմանագիրն օրենսդրության համակարգի մաս ճանաչելու համար:

ПРИЗНАНИЕ ПОДЗАКОННЫХ АКТОВ НЕДЕЙСТВИТЕЛЬНЫМИ НА ОСНОВАНИИ ПРОТИВОРЕЧИЙ МЕЖДУНАРОДНОМУ ДОГОВОРУ (МЕТОДИЧЕСКИЕ И АДМИНИСТРАТИВНЫЕ ПРОБЛЕМЫ)

ГАМБАРЯН АРТУР

Заведующий кафедры теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор Академии государственного управления Республики Армения, доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

МУРАДЯН МАНУК

Кандидат юридических наук, доцент, временно исполняющий обязанности ректора Образовательного комплекса МВД РА, преподаватель Французского университета в Армении, преподаватель Академии адвокатуры РА

ШАКАРЯН ТАМАРА

Заведующий кафедры права Академии государственного управления РА, преподаватель Французского университета в Армении, кафедры Теории государства и права Российско-Армянского Университета, кандидат юридических наук, доцент

Аннотация: Статья посвящена методологическим и административно-правовым вопросам признания подзаконных актов недействительными на основании их противоречия международному договору, а также вопросам правового суверенитета. Представлена трехмерная система проверки законности подзаконных актов: конституционализм, законность и конвенциональность, и в этом контексте подчеркивается несостоятельность критерия конвенциональности.

Также рассматриваются теоретические подходы к соотношению международного и национального права: дуализм и монизм, с особым акцентом на принцип «*pacta sunt servanda*», особенно в контексте уточнения порядка применения международного права в системе национального законодательства.

В статье на научном уровне обсуждаются следующие ключевые вопросы: является ли международный договор нормативным правовым актом и какое место он занимает в системе иерархии правовых актов (законодательства), а также с реалистической и правосравнительной точки зрения обоснована ли идея признания подзаконных актов недействительными на основании их противоречия конвенции?

В статье также рассматривается вопрос о правомерности компетенции Административного суда РА признать подзаконный акт недействительным по причине его противоречия международному договору и его сравнительно-правовой аспект.

Ключевые слова: международный договор, подзаконные акты, критерий конвенционности, принцип «*pacta sunt servanda*», дуализм, монизм, противоречие конвенции, юрисдикция административного суда, признание недействительным.

RECOGNITION OF BY-LAWS AS INVALID ON THE BASIS OF CONTRADICTIONS WITH AN INTERNATIONAL TREATY (METHODOLOGICAL AND ADMINISTRATIVE PROBLEMS)

GHAMBARYAN ARTUR

*Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law of
Russian-Armenian University, Full Professor of the State Administration Academy
of the Republic of Armenia, Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA*

MURADYAN MANUK

*Candidate of Law, Associate Professor,
Acting Rector of the Educational Complex of the Ministry of Internal Affairs
of the Republic of Armenia, Lecturer at the French University in Armenia,
Lecturer at the Academy of Advocacy of the Republic of Armenia*

SHAKARYAN TAMARA

*Head of Chair of Law Public Administration Academy of the RA, lecturer France University
in Armenia, Chair of Theory of State and Law of the Russian-Armenian University,
PhD in Laws, Associate professor of Law*

Abstract: The article explores the methodological and administrative-judicial challenges related to declaring sub-legislative acts invalid on the grounds of their contradiction to international treaties, alongside issues concerning legal sovereignty. It introduces a three-tiered framework for assessing the legality of sub-legislative acts - constitutionality, legality, and conventionality, and highlights the practical limitations of the conventionality criterion.

The article also analyzes theoretical approaches to the relationship between international and domestic law, namely dualism and monism, with particular emphasis on the principle of “pacta sunt servanda” in clarifying the applicability of international treaties within the national legal system. The article discusses the following key issues on a scientific level: is an international treaty a normative legal act, and what place does it occupy in the hierarchy of legal acts (legislation)? Also, from a realist and comparative legal perspective, is the idea of recognizing sub-legislative acts as invalid due to their contradiction with the convention justified?

Finally, the article examines the legitimacy of the competence of the Administrative Court of the Republic of Armenia to annul sub-legislative acts on such grounds and evaluates this issue through a comparative legal lens.

Keywords: international treaty, sub-legislative acts, criterion of conventionality, “pacta sunt servanda” principle, dualism, monism, contradiction to the convention, jurisdiction of the administrative court, annulment.

*Հոդվածը գրախոսվել է՝ 26.03.2025թ.
Ներկայացվել է տպագրության՝ 04.04.2025թ.*